Azg
armenian daily
10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1997 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ # 172 (1426)

Ուկրաինան անօրինական է համարում ԼՂՀ նախագահական ընտրությունները

ԿԻԵՎ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ուկրաինայի ԱԳՆ-ը հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սեպտեմբերի 1-ին կայացած նախագահական ընտրությունները չեն կարող համարվել օրինական, իսկ ԼՂՀ-ի նախագահը՝ համաժողովրդականորեն ընտրված: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, նախարարության տարածած հայտարարության մեջ ընդգծված է, որ այս «ընտրությունները տեղի են ունեցել ինքնահռչակ հանրապետությունում, որը չի ճանաչվել աշխարհի ոչ մի պետության կողմից»:

Արտգործնախարարությունը գտնում է, որ դրանով իսկ մարտահրավեր է նետված համաշխարհային հանրությանը, եւ, ըստ էության, անտեսվել է ընտրությունների անցկացման աննպատակահարմարության վերաբերյալ միջազգային կարծիքը. կատարվել է հերթական քայլը ԼՂՀ-ի հեռագա ինքնամեկուսացման եւ նրա շուրջ հակամարտության կարգավորման գործընթացի ձգձգման ուղղությամբ:

ԱԳՆ-ն վստահություն է հայտնել, որ ԼՂ երկարատեւ եւ բարդ հակամարտության լուծման համար բոլոր կողմերին անհրաժեշտ է հետեւել պետությունների սահմանների անխախտելիության սկզբունքին, իսկ խաղաղության տանող ամենակարճ ուղին եվրակազմակերպության Մինսկի խմբի բանակցություններն են: «Ցանկացած այլ ուղիներ անհեռանկարային են եւ հանգեցնում են տարածաշրջանում իրադրության սրմանը», ընդգծված է հայտարարության մեջ:

ԱՇԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հայաստանը երիցս վարկառու երկի՞ր

ՆԱԲԻԼԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Աժ-ի սեպտեմբերի 9-ի նիստում Ակցիզային հարկի մասին ՀՀ օրենքում փոփոխությունների հարցի քննարկումն ու քվեարկությունը հետաձգվեցին՝ կառավարությանը հնարավորություն տալով լրամշակված տարբերակ ներկայացնել: Այնուհետեւ ֆինանսների նախարար Ա. Դարբինյանը ներկայացրեց միջազգային 2 պայմանագիր: Դրանցից մեկը ՀՀ-ի եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ զարգացման վարկի (կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության երկրորդ վարկ) համաձայնագիրն էր՝ ներկայացված Աժ-ի վավերացմանը: Ըստ բաժանված տեղեկանքի՝ հիշյալ ընկերակցությունը որոշակի ժամկետներում եւ պայմաններով ՀՀ-ին պարտքով տրամադրելու է 3 մլն 600 հազար վարկառության հասուկ իրավունքներին համարժեք գումար (5 մլն ամերիկյան դոլարին համարժեք գումար): Վարկառուն (տվյալ դեպքում մեր երկիրը) վարկի հիմնագումարը յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին եւ հուլիսի 1-ին կատարելիք մուծումներով ետ պետք է վճարի սկսած 2008 թ. հունվարի 1-ից մինչեւ 2032 թ. հուլիսի 1-ը:

Վարկը տրամադրվում է անտոկոս 35 տարի ժամկետով, որից տասը տարին արտոնյալ ժամկետ է:

Ըստ Սահմանադրական դատարանի եզրակացության, 1997 թ. սեպտեմբերի 2-ին Վաշինգտոնում կնքված սույն համաձայնագիրը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Նույն օրը կնքված հաջորդ համաձայնագրի համաձայն Միջազգային զարգացման ընկերակցության կողմից Հայաստանին տրամադրվելու է 43 մլն 100 հազար վարկառության հասուկ իրավունքներին համարժեք գումար, որը համարժեք է 60 մլն դոլարին: Սակայն եթե հիշյալ ընկերակցությունը վարկառուին տեղեկացնի, որ ձեռքբերված առաջընթացը ու կատարված գործողությունները կառուցվածքային բարեփոխումների բնագավառում բավարար չեն, եւ եթե այդ ծանուցումից 90 օրվա ընթացքում վարկառուն չձեռնարկի համապատասխան միջոցառումներ Ընկերակցության պահանջները բավարարելու համար, ապա վերջինս կարող է վարկառուին տեղեկացնելով կանգնեցնել վարկի տրամադրումը կամ դրա համապատասխան մասը: Համաձայնագրում նշվում են վարկի տրամադրման պայմանները եւ ժամկետները: Վարկը տրամադրվում է անտոկոս, 35 տարի ժամկետով: Սույն համաձայնագրի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումը եւս դրական է:

Երկու համաձայնագրերի վերաբերյալ եղան առարկություններ, ելույթներ, սակայն քվեարկությունների արդյունքում երկու համաձայնագրերն էլ ընդունվեցին՝ առանց խոչընդոտների:

Ապա Աժ-ն անդրադարձավ Մախսային սակագնի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին ՀՀ նախագահի առարկություններին: Առաջարկվող փոփոխություններից մեկի համաձայն՝ ՀՀ մախսային մարմինները հայտարարատուներից գանձում են մախսավճար՝ հայտարարագրվող ապրանքի մախսային արժեքի 0,3 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 600 հազար դրամ:

Ըստ ներկայացված տարբերակի՝ 1998 թ. հունվարի 1-ից մախսավճար չի գանձվում (քվեարկությունից առաջ 98 թ. հանվեց եւ վերջնական ընդունված տարբերակում ամրագրվեց 99 թիվը):

Աժ ֆինանսավարկային հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը նշեց, որ նախագահի առարկությունների վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը բացասական է:

Վիկտոր Դալլաքյանն ընդգծեց, որ «նախագահի առարկություններն անօրինական են, քանի որ փոփոխություններ պետք է կատարել նաեւ բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքում»:

Չնայած այսպիսի կարծիքներին՝ քվեարկությամբ նախագահի վետոն չհաղթահարվեց:

Այսպիսի քննարկումներն ու քվեարկությունները մեկ անգամ եւս ապացուցում են, որ ոչ պրոֆեսիոնալ խորհրդարանում աշխատանքների իրական արդյունավետությունը ընկնում է մի քանի անգամ, մանավանդ որ նույն պատգամավորի մոտ ի հայտ են գալիս առնվազն երկու «ես»-եր, շահեր եւ հետաքրքրություններ, որոնք երբ ու լուծում են գտնում օրենքների հաշվին: Ինչ վերաբերում է երկարաժամկետ վարկերին, ապա դրանց պերմանենտ սպառման արդյունքում Հայաստանը վերածվում է երիցս վարկառու երկրի: Հարցն ունի նաեւ հաջորդ կողմը, բարեփոխումներին նպաստակամիտված վարկերի սպառման եւ իրացման արդյունքում բարեփոխումների ճակատագիրը Հայաստանում, իմ համոզմամբ, շարունակում է մնալ անհայտ:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ վարչապետ նշանակվեց Լեոնարդ Պետրոսյանը

Երեկ ԼՂՀ նորընտիր նախագահ Արկադի Ղուկասյանի առաջին հրամանագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության նախագահ նշանակվեց Լեոնարդ

Պետրոսյանը, որը երրորդ անգամ է գլխավորում բարձրագույն գործադիր իշխանության դիակտարի դարձանը: Նախկինում ԼՂՀ վարչապետը դիակտարում էր ՀՀ հասուկ ծրագրերի վարչությունը: այնուհետեւ մինչեւ նախագահական նոր ընտրությունների անցկացումը, իրականացնում էր ԼՂՀ նախագահի պարտականությունները: Արկադի Ղուկասյանի հրամանագրով կառավարության նոր նախագահին հանձնարարված է երկամսյա ժամկետում մշակել եւ հաստատման ներկայացնել ԼՂՀ կառավարության նոր կառուցվածքը: Ավելացնենք, որ մասնագիտությամբ տնտեսագետ Լեոնարդ Պետրոսյանը Լեռնային Ղարաբաղում ճանաչված է որպես տնտեսական բարեփոխումների նախաձեռնող եւ տուկայական հարաբերությունների հաստատման ակտիվ կողմնակից:

ՎԱՀԲԱՄ ԱՂԱՅԱՆ

«Լինսի» հիմնարկի նոր բարեգործությունը

«Լինսի» հիմնարկը կրթական տարեմուտի նախօրյակին 475 հազար դոլարի նվիրատվություն է կատարել Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան բեմի ազգային վարժարաններին: Գումարը հատկացվել է հետեւյալ կերպ.

«Ֆերահյան» վարժարան	$100 000
«Ռոզ եւ Ալեք Փիլիպոս» վարժարան	$100 000
«Մեսրոպյան» վարժարան	$100 000
«Վահան եւ Անուշ Շամլյան» վարժարան	$100 000
«Արի Կիրակոս Մինասյան» վարժարան	$50 000
«Լեւոն եւ Հասմիկ Թավլյան» վարժարան	$25 000

Այս կապակցությամբ Կիլիկյան բեմի առաջնորդ Գերաբնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Մարտիրոսյանը, Կրոնական ժողովն ու Ազգային վարչությունը իրենց շնորհակալությունն են հայտնել «Լինսի» հիմնարկին:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կրթաթոշակների «Վաչե Մանուկյան» 1 մլն դոլարի հիմնադրամ

ԵՐԵՎԱՆ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ընդառաջելով Մեծի Տանն Կիլիկիո Առամ Ա կաթողիկոսի փափագին, լոնդոնահայ ազգային բարերար Վաչե Մանուկյանը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հովանավորության ներքո հիմնել է մեկ միլիոն դոլարի համալսարանական կրթաթոշակների ֆոնդ:

Ֆոնդը սկսելու է գործել 1997-1998 ուսումնական տարվանից, հասուկ կանոնադրության համաձայն:

ՀԱՄԱՌՈՏ

Թուրքիան անդրադարձավ անվանեց Սիմիտիսի հայտարարությունը

9 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, VOA: Թուրքիայի փոխարտգործնախարար Ինալ Բաթուն անդրադարձավ անվանեց Հունաստանի վարչապետ Կոստաս Սիմիտիսի նախազգուշացումն այն մասին, որ եթե Անկարան խախտի Կիպրոսում հաստատված վիճակը, ապա իր երկիրը պատրաստ կլինի պատերազմ սկսել Թուրքիայի դեմ:

Հայիթի. 300 զոհ եւ նույնքան անհայտ կորած նավաբեկությունից

ՀԱՎԱՆԱ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երկուշաբթի Հայիթիի ափերի մոտ տեղի ունեցած նավաբեկության հետեւանքով մոտ 300 մարդ է զոհվել եւ մոտավորապես նույնքան էլ անհայտ կորել: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, ողբերգությունը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ Գոնաիվ ծովածոցում երթեւեկող լաստանավը ջրասույզ է եղել ափից 200 մետր հեռավորության վրա: Տարբեր գնահատումներով, 20 մետր երկարությամբ նավի վրա 600-700 ուղեւոր էր գտնվում:

ՊՐԱՀԱ

Ինչ կատարվել է Ղարաբաղում, անշրջելի է

Հայտարարել է Սերգեյ Կովալյովը Պրահայի միջազգային համաժողովում

ՊՐԱՀԱ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը, աշխարհի առաջատար մտածողներ, գրողներ, կրոնական առաջնորդներ ու քաղաքագետներ էին մասնակցում «Ֆորում 2000» միջազգային համաժողովին, որը կազմակերպել էին Չեխիայի նախագահ Վացլավ Հավելը եւ Նորվեյան մրցանակի դափնեկիր, ազգությամբ հրեա, ամերիկացի գրող ու հումանիստ Էլի Վիսելը: Երեք օր շարունակ քննվել են մարդկային քաղաքակրթության անցյալը, ներկան եւ ապագան:

Մասնակիցներն անդրադարձել են նաեւ ազգամիջյան խնդիրներին: Նման մի քննարկումից հետո «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրության բոլորկիցը Էլի Վիսելի հետ զրուցել է Հայոց եղեռնի մասին: «Ես ոգեկոչում եմ այն մարդկանց բվին, ասել է Վիսելը, ովքեր ոգեւորում են հայոց եղեռնը ճանաչելու համար: Ես գրել եմ Ֆրանց Վերֆելի գրքի մասին: Իմիջիայլոց, թուրքերի հետ ես խնդիրներ ունեմ ոչ միայն հայկական, այլեւ քրդական հարցերի պատճառով: Ես բացարձակապես հայերի կողմն եմ: Տարիներ առաջ թուրք հանգուցյալ նախագահին առաջարկել եմ պատմաբանների դռնփակ խորհրդաժողով անցկացնել այս հարցին լուծում տալու հասար: Դուք չեք կարող ժխտել մի ամբողջ ժողովրդի հիշողությունը, ասել եմ նրան»:

Ռուս հայտնի իրավաբաշտան Սերգեյ Կովալյովը համաժողովում ունեցած իր ելույթում կասկածի տակ է դրել ՄԱԿ-ի որպես մարդու իրավունքների իսկական երաշխավորի դերը: Ըստ նրա, ճշված՝ չեն նաեւ ազգերի իրավունքները, եւ այս պարտում գործում է կամայականությունը: Մասնավորապես սահմանների անձեռնմխելիության եւ ազգերի ինքնորոշման իրավունքի մասին ՄԱԿ-ի սկզբունքներն իրար հակասում են: «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում Ղարաբաղի առնչությամբ նա նշել է, թե կատարյալ իրավական լուծում նման հարցերում հնարավոր չէ եւ, հավանաբար, պետք է որոշ քաղաքական փոխզիջում որոնել: Ինչ կատարվել է Ղարաբաղում, նրա կարծիքով, անշրջելի է, եւ Աղրթիջանն էլ չի կարող ոչինչ անել, քանի որ թույլ է: Դա կտեսի այնքան, մինչեւ ադրբեջանցիները նավթով գենք գնեն: Հետեւաբար, առկա է անկայունություն: Ըստ Կովալյովի, Նման սահմանային հարցերի լուծումը պիտի առայժմ հետաձգել անորոշ ժամանակով: Ընդգծելով, որ նման հարցերը, ցավոք, լուծվում են զենքով, նա հույս հայտնեց, որ ուժերի հավասարակշռությունը սկզբունքորեն չի փոխվի:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Հանրապետությունից» հեռացան 9 պատգամավորներ

Պատգամավորական նոր խմբեր ԱԺ-ում՝ «Հայրենիք» եւ «Սոցիալական պետություն»

ԱԺ-ի սեպտեմբերի 9-ի նիստում ԱԺ փոխնախագահ Ա. Սահակյանը տեղեկացրեց, որ Կանոնակարգի վերջին ընդունված փոփոխություններ համաձայն, խորհրդարանում ստեղծվել են երկու նոր պատգամավորական խմբեր՝ «Սոցիալական պետություն» եւ «Հայրենիք»: «Սոցիալական պետության» նախագահ է ընտրվել խմբի ստեղծման նախաձեռնող, սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ Գեղամ Ղարիբջանյանը: Խմբում ընդգրկված պատգամավորների թիվը ընդգրկված 11-ն է (հիշեցնենք, որ այս խմբի ստեղծման առաջին երկու փորձերը ձախողվեցին, քանի որ խմբում ընդգրկվելու համաձայնություն տված մի քանի պատգամավորներ վերջին պահին դուրս եկան խմբից): Խմբի քարտուղարն է պետահրավական հանձնաժողովի նորընտիր փոխնախագահ Վիկտոր Դալլաքյանը: Խմբում ընդգրկված են նաեւ Ջեմմա Անանյանը, Հովհաննես Սիսարոնյանը, Նորիկ Սիսարոնյանը եւ այլք:

«Հայրենիք» պատգամավորական խմբի նախագահը էդ. Եգորյանն է: Խմբում ընդգրկված են 9 պատգամավորներ Արմեն Կիրակոսյան, Մկրտիչ Գիմիշյան, Այդին Մորիկյան, Պետրոս Մակեյան, Հովհ. Թոմաջյան եւ այլք: Ավելի ուշ, հայտարարությունների համար նախատեսված ժամին էդ. Եգորյանը ներկայացրեց խմբի ստեղծման եւ գործունեության նպատակները, այն է՝ նպաստել իրական ժողովրդավարական գործընթացին: Տեղեկացվեց, որ խումբը օրենսդրական նախաձեռնության կարգով, ԱԺ-ին կներկայացնի Մամուլի եւ այլ ՁԼՄ-ներին օժանդակելու մասին օրենքի նախագիծ: Եգորյանը նշեց նաեւ, որ «Հայրենիք» խմբի ստեղծումը պայմանավորված է նրանով, որ խորհրդարանի կառույցները թերացել են եւ «անհրաժեշտ սկզբունքային մոտեցում չեն ցուցաբերում կարեւոր հարցերի ու խնդիրների հանդեպ»: Նա նշեց նաեւ, որ դուրս գալով «Հանրապետությունից», նորաստեղծ խմբի ՀՀՇ անդամները դուրս չեն գալիս ՀՀՇ-ից:

Իսկ «Հանրապետություն» միավորման նախագահ Տեր Հուսիկ Լազարյանը նշեց, որ ԱԺ-ի նիստի ավարտից հետո, ժամը 18:30-ին ՀՀՇ-ում կգումարվի միավորման նիստ՝ այնտեղ ստեղծված իրավիճակը քննարկելու, ինչպես նաեւ միավորմանն անդամակցելու վերաբերյալ մի շարք պատգամավորների դիմումները քննարկելու համար:

Միավորման այս, թեպետ՝ սպասելի, սակայն հսկայական եւ հաստատ պառակտումը, պետք է ենթադրել, առիթ է դառնալու «Հանրապետությունում» երկարաբյա ռեժիմի հաստատման:

Իր հայտարարության մեջ «Հայրենիք» խմբի անդամ Պետրոս Մակեյանն անդրադարձավ «Ար» հեռուստատեսությամբ ԱԺ փոխնախագահ Արա Սահակյանի հարցազրույցի մի շարք դրույթներին, մասնավորապես՝ հետեւյալ ձեւակերպումներին. «Ազգ միգրացիան թուլացրեց սոցիալական բեռը» հանրապետությունում եւ «Պետությունը պարտավոր չէ ժողովրդին կերակրելու»: Մակեյանը նշեց, որ այսպիսի «քաղաքական գործիչները մտածում են, որ իրենց դեմ խաղ չկա»:

ԴԱՎԻԹ ՄԱՐՏՈՅԱՆ

Ազգային ժողովի արտահերթ նիստը փակելու է էդ. Եգորյանի «հարցը»

ԵՐԵՎԱՆ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 9-ին, Ազգային ժողովի նիստի ավարտից հետո, ՀՀՇ վարչության շենքում տեղի ունեցավ ԱԺ «Հանրապետություն» պատգամավորական խմբակցության նիստը, որը վարում էր խմբակցության նախագահ Տեր Հուսիկ Լազարյանը: Նիստին մասնակցում էին ՀՀՇ վարչության նախագահ Վանո Սիրադեղյանը, վարչության անդամներ: Օրակարգում առաջին հարցի առնչությամբ քվեարկությամբ միաձայն խմբակցության կազմում ընդունվեցին ԱԺ պատգամավորներ Համլետ Հայրապետյանը եւ Դավիթ Մելիքյանը, որոնք ԱԺ պատգամավոր են ընտրվել որպես ՀՀՇ անդամներ, սակայն «Հանրապետություն» խմբակցության ընտրական ցուցակում ընդգրկված չեն եղել:

Օրակարգի երկրորդ հարցը վերաբերում էր սեպտեմբերի 9-ին «Հանրապետություն» խմբակցությունից ինը անդամների դուրս գալու մասին դիմումի ներկայացումից հետո խմբակցությունում ստեղծվող իրավիճակին: Նրանք են՝ էդ. Եգորյան, Ա. Կիրակոսյան, Գ. Ներսիսյան, Ա. Մորիկյան, Մ. Գիմիշյան, Պ. Մակեյան, Գ. Գրիգորյան, Ա. Ավետիսյան, Հ. Թոմաջյան: Վերջիններս, ինչպես հայտնի է, նախաձեռնել են «Հայրենիք» պատգամավորական խմբի ստեղծումը: Այս հարցի առնչությամբ առաջարկ եղավ խմբակցության, բնականաբար նաեւ խորհրդարանի հետագա արդյունավետ գործունեության շահերից ելնելով, անվստահություն հայտնել նոր խմբի նախաձեռնող՝ ԱԺ պետական-իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ էդ. Եգորյանին, վերանայելով այդ պատգոնում նրա հետագա գործունեության նպատակահարմարությունը: Ինչպես նշեցին ելույթ ունեցողները՝ ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանը, Վանո Սիրադեղյանը, Արա Սահակյանը, Տեր Հուսիկ Լազարյանը, Շահեն Պետրոսյանը եւ այլք, խնդիրն ունի զուտ քաղաքական եւ ոչ անձնական բնույթ:

Ի վերջո, խմբակցությունը որոշեց, հենվելով ԱԺ կանոնակարգի համապատասխան դրույթի վրա, պատգամավորների ստորագրություններ հավաքել եւ դիմել ՀՀ ԱԺ նախագահին՝ սեպտեմբերի 10-ին, ժամը 18:30-ին Ազգային ժողովի արտահերթ նիստ հրավիրել հետեւյալ օրակարգով՝ «Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի հետկանչի վերաբերյալ»:

Նույն օրը երեկոյան անհրաժեշտ թվով ստորագրություններ (պատգամավորների ընդհանուր թվի 1/3-ից ավելի) արդեն իսկ հավաքված էին՝ ԱԺ արտահերթ նիստ հրավիրելու նպատակով:

ՎԱՆԱՁՈՐ

Իրականացվում է «Տեմպուս» ծրագիրը

Անգլիայի, Գերմանիայի եւ Հայաստանի եռակողմ համաձայնությամբ իրականացվում է «Տեմպուս» ծրագիրը, որի նպատակն է նոր քաղաքականություն վարել սոցիալական ոլորտում: Լոնդոնի, Մայնի Ֆրանկֆուրտի, Հայաստանի մի շարք քաղաքների առաջատար բուհերի սոցիոլոգիայի բնագավառի մասնագետներ են համախմբվել՝ ծրագիրն իրականացնելու: Երկոյա դասընթացներ տեղի ունեցան նաեւ Վանաձորում: Արտասահմանցի մասնագետները ու փորձագետները քաղաքի սոցիալական բնագավառի աշխատողներին ծանոթացրին եվրոպական չափանիշներով մշակված ծրագրերին՝ դրանք տեղայնացնելով կոնկրետ Վանաձորի համար:

Հյուրերին ընդունեց նաեւ Վանաձորի քաղաքապետ Անդրանիկ Հարությունյանը: Վանաձորում կոնկրետ համագործակցության օջախ է նախատեսվում պետական մանկավարժական ինստիտուտը, օտար լեզուների ամբիոնով եւ գիտական անհրաժեշտ ներուժով:

ՄԱՆՎԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍԱՍՈՒԼ

Սիա եւ առաջին «ծիծեռնակը»...

Ասնան շեմին ծիծեռնակի կանչը ազդարարեց մեր մամուլը այդ թվում «Ռեսպուբլիկա Արմենիա» պատշգամբերը, որ սեպտեմբերի 4-ի իր համարում տպագրեց մի շատ խորիմաստ հոդված «Фонд Айастан: писать так писать?» վերնագրով. «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանի գործադիր տնօրենի կանչը ազդարարեց մեր մամուլը, այդ թվում «Ռեսպուբլիկա Արմենիա» պատշգամբերը, որ սեպտեմբերի 4-ի իր համարում տպագրեց մի շատ խորիմաստ հոդված «Фонд Айастан: писать так писать?» վերնագրով. «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանի վճռական որոշումը դատարանի միջոցով «Մոլորակ» օրաթերթից նյութական փոխհատուցում պահանջել հասցված բարոյական վնասի դիմաց:

Իսկ բարոյական վնասը, ինչպես վկայում է «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթը, բավականին ծանր է, քանի որ նյութական փոխհատուցումն էլ շափազանց խոշոր է, ոչ ավել, ոչ պակաս 238 հազար դոլար:

Տիկին Պետրոսյանի համոզմամբ թերթը այդքանի խոշոր չափի վնաս է հասցրել հիմնադրամին կասկածի տակ դնելով հիմնադրամի տնօրենի հեռավոր Ավստրալիա այցի բարձր նպատակները:

Միանշանակ դարձ է, եթե Մանուշակ Պետրոսյանը իրականացնի իր նկրտումը գործը տա դատարան, եւ եթե դատարանը նրա հայցը բավարարի, «Մոլորակ» թերթը իսկույն կվախճանվի: Ի դեպ, չէ՞ փրկվի ոչ մի հայաստանյան թերթ, քանի որ այսօրվա զանգվածային լրատվության ոչ մի միջոց պահուստային 2 հազար դոլար անգամ չունի, էլ ինչ խոսք 238 հազար դոլարի մասին...

Արդյոք տիկին Պետրոսյանը տեղյա՞կ է այդ փաստից: Եթե այո, ապա պատժամիջոցի նպատակը ակնհայտ է՝ փակել «Մոլորակը», իսկ դեպ, չէ՞ փրկվի ոչ մի հայաստանյան թերթ, քանի որ այսօրվա զանգվածային լրատվության ոչ մի միջոց պահուստային 2 հազար դոլար անգամ չունի, էլ ինչ խոսք 238 հազար դոլարի մասին...

Արդյոք տիկին Պետրոսյանը տեղյա՞կ է այդ փաստից: Եթե այո, ապա պատժամիջոցի նպատակը ակնհայտ է՝ փակել «Մոլորակը», իսկ դեպ, չէ՞ փրկվի ոչ մի հայաստանյան թերթ, քանի որ այսօրվա զանգվածային լրատվության ոչ մի միջոց պահուստային 2 հազար դոլար անգամ չունի, էլ ինչ խոսք 238 հազար դոլարի մասին...



Մանուշակ Պետրոսյանի նախորդ օրվա մամլո ասուլիսի առթիվ:

Ի դեպ, պակաս խորիմաստ չէ նաեւ հոդվածի ենթավերնագիրը՝ «Четверть миллиона долларов за одну статью»:

Որոնցի ընթերցողին այս խորիմաստությամբ երկար չգայթակղեմ, անցնեմ հոդվածի բովանդակությանը, որն ի լուր հայ հասարակության հայտնում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Մանուշակ Պետրոսյանի վճռական որոշումը դատարանի միջոցով «Մոլորակ» օրաթերթից նյութական փոխհատուցում պահանջել հասցված բարոյական վնասի դիմաց:

Իսկ բարոյական վնասը, ինչպես վկայում է «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթը, բավականին ծանր է, քանի որ նյութական փոխհատուցումն էլ շափազանց խոշոր է, ոչ ավել, ոչ պակաս 238 հազար դոլար:

Տիկին Պետրոսյանի համոզմամբ թերթը այդքանի խոշոր չափի վնաս է հասցրել հիմնադրամին կասկածի տակ դնելով հիմնադրամի տնօրենի հեռավոր Ավստրալիա այցի բարձր նպատակները:

Միանշանակ դարձ է, եթե Մանուշակ Պետրոսյանը իրականացնի իր նկրտումը գործը տա դատարան, եւ եթե դատարանը նրա հայցը բավարարի, «Մոլորակ» թերթը իսկույն կվախճանվի: Ի դեպ, չէ՞ փրկվի ոչ մի հայաստանյան թերթ, քանի որ այսօրվա զանգվածային լրատվության ոչ մի միջոց պահուստային 2 հազար դոլար անգամ չունի, էլ ինչ խոսք 238 հազար դոլարի մասին...

Արդյոք տիկին Պետրոսյանը տեղյա՞կ է այդ փաստից: Եթե այո, ապա պատժամիջոցի նպատակը ակնհայտ է՝ փակել «Մոլորակը», իսկ

ԱԶԳ

Ամփոփում

ՄՈՍԿՎԱ

Այցը հաջող էր, սպասենք արդյունքներին

Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի առաջին դաշտոնական այցը Ռուսաստան լուսաբանում էր հայ լրագրողների սովոր մի բանակ: Երեւի հանրապետական մամուլում ամեն ինչ ասվել է: Որդես մոսկվայաբնակ հայ լրագրող կուզենայի հայտնել որոշ նկատառումներ այցի արձագանքների առնչությամբ: Նախապես հարկ համարելով «Ազգի» ընթերցողներին իրազեկել յուրահատուկ մի հանգամանքի մասին: Այսօրվա Ռուսաստանում հեռուստատեսության կամ մամուլի կողմից որեւէ քաղաքական իրադարձության տրված գնահատականը արժեքավորելու համար պետք է ելնել այստեղ արդեն հասկանալի դարձած մի պարզ չափանիշից ինչքան է տվյալ իրադարձությունը համապատասխանում... հրեաների շահերին: Պատահական չէր, որ Բելոռուսիայում ռուսաստանցի լրագրողների «հալածման» հոշոտված թեման իր «հրատապությամբ» չէր զիջում, գուցե եւ գերազանցում էր ռուս-հայկական հիրավի նշանակալի երկխոսության լուսաբանմանը: Եթե որեւէ մեկը Հայաստանում կարծում է, թե հակաբելոռուսական հեռուստապրը ակնկալ է առնում Լուկաշենկոյի անձնավորությունից, խորապես սխալվում է: Պարզապես հրեաներին ոչ մի պարագայում ձեռնտու չէ ուժեղ Ռուսաստանը, եւ ֆինանսիսի անհողդողդ ձեռքով վերահսկելով այս երկրի զանգվածային տեղեկատվության միջոցները, նրանք պատրաստ են եթե ոչ ձախողել, ապա գոնե վարկաբեկել Ռուսաստանի հարաբերությունը նոպաստող ցանկացած նախաձեռնություն: Մեծ թե փոքր

Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահի հետ բերեւս հետաքրքիր է հասկանալ ծանոթ ռուս դիվանագետի հոմորով ասված տեղյակը անկրկնելի խորամանկությամբ հայերդ դաս տվեցիք բելոռուսներին: Այսինքն դարձյալ Ռուսաստանի մերձավոր դաշնակիցը, հնարեն խուսափելով տեղի բերբերի ու հեռուստատեսության բուքմոռից: Որ Հայաստանը իրոք դառնում է Ռուսաստանի ստրատեգիական գործընկերը, չքաղցրեց նաեւ նախագահը, իր մամուլի ասուլիսում հայտարարելով, որ «ստորագրված փաստաթուղթը ավելին է քան ռուս-բելառուսական հարաբերությունները»: Բայց ի՞նչ խորամանկության մասին է խոսքը, կհարցնեն ընթերցողները: Բանն այն է, որ բելոռուսները գործում էին հրադարակայնորեն, տեսական ժամանակով տակտիկական կոպիտ վրիպումներով, թիրախ դառնալով շարակամների համար: Իսկ ահա հայերը գործելակերպի անակնկալությամբ, շեշտակիությամբ ու արդյունավետությամբ խուճապի մատնեցին Ռուսաստանի մամուլի միջոցներին: Կարելի է չկասկածել, եւ մոսկվացի հայերս հաստատես ունենք այդ մտավախությունը, որ եթե Ռուսաստանի հետ նման լայնածավալ մերձեցումը իրականացվեր հիշյալ «բելոռուսական» սցենարով, մեզ չէր հաջողվի խուսափել հակահայկական (չասենք հակատերրորիստական) քսմնելի կամոնանիայից:

Կարելի է առարկել, որ Հայաստանը Բելոռուսիա չէ: Բայց մյուս կողմից դե ֆակտո արձանագրվում է այն իրողությունը, որ ի դեմս Հայաստանի Ռուսաստանը Անդրկովկասում (Կովկասում) ձեռք է բերում միակ հավատարիմ դաշնակցի: Քիչ չէ:

Այնուհանդերձ, որ հայ դիվանագիտությունը կարող է հավակնել տեղի ունեցածը համարելու իր նորաբուխ դաշտության դայծառ էջերից մեկը:

Ինչ-որ տեղ Լեւոն Տեր-Պետրոսյանի այցը այստեղ դիտվում էր... Ալիեւի այցի ֆոնի վրա, այն իմաստով, թե ինչով կտարբերվեն դրանք իրարից տոմով, ժոլիտների ու համբույրների քանակով, հաճոյախոսության աստիճանով, հանդիպումների տեւողությամբ, ստորագրված փաստաթղթերի իրական արժեքով եւ այլն: Ի դեպ, այստեղ համոզված են, որ Ալիեւի հետ նմանվելու համար Լեւոն Տեր-Պետրոսյանը պետք է ասեր, որ Ղարաբաղի բարեւորդիչ խորհուրդն ինքն է հանդիսանում, չափազանց բարձր գնահատելով տոնը: Ակնկալվում էր, որ գոնե բարեգործ լրագրողները կվարձեն հավատարկեռությունից հանել նրան: Բայց ոչ: Ճիշտ է, աղբիջանցիներն որոշ հարցեր շնչավորեցին ռուս լրագրողի միջոցով, բայց նախագահը հաստատեց նախկինում հայտնած իր այն միտքը, որ եթե հաջողվի հաստատել երկու հարեւան ժողովուրդների, ապա վստահությունը եւ տնտեսական հարաբերությունները շատ սերերի բարեւորդիչ խորհուրդ ունի հանգիստ, չափազանց տոնը: Ակնկալվում էր, որ գոնե բարեգործ լրագրողները կվարձեն հավատարկեռությունից հանել նրան: Բայց ոչ: Ճիշտ է, աղբիջանցիներ որոշ հարցեր շնչավորեցին ռուս լրագրողի միջոցով, բայց նախագահը հաստատեց նախկինում հայտնած իր այն միտքը, որ եթե հաջողվի հաստատել երկու հարեւան ժողովուրդների, ապա վստահությունը եւ տնտեսական հարաբերությունները շատ կոտ կողմերի մերձեցման արարողությունների տրամաբանությունը եւ բնականությունը, որ այդպես էլ պիտի լիներ, որ արդեն պահը հասունացել էր: Հավատարկիր այրի Լեւոն Տեր-Պետրոսյանի «կերպարը» համակրանք էր առաջացնում, արժանավայել կեցվածքը, հարգանք: Ճիշտ է, Հայաստանը նավթ չունի, բայց շուտով գազ կունենանք, ուժեղ բանակ ունենք եւ ներգործության իրական լծակներ: Եվ եթե Ռուսաստանն ի հակակշիռ Վաշինգտոնի թեւ-թիկունք կանգնի մեզ, մենք կաղաղակենք նրա լիարժեք ներկայությունը աշխարհաշրջանում: Այլ խոսքով ասած, շահերի կատարյալ համընկնում, ինչն էլ ապահովում էր կողմերի արժանապատվությունը, տեղ չթողնելով անհարկի սեթեւեթումների:

Բավականին բարյացակամ մթնոլորտում անցավ նախագահի մամուլի ասուլիսը ՌԴ արտգործնախարարությունում: Լրագրողներին դու՝ նկատ «անկախության դատարանների» (իր իսկ նախագահի տատայությամբ) բոլորն բրդված էին այստեղ համոզված են, որ Լիբերի հետ կնքված շատ փաստաթղթեր այդպես էլ կնքման թղթի վրա: Արժանին մատուցելով Հեյդար Ալիեւիչի քաղաքագիտական ճարտարությանը, մեկնաբանություններում բավականին հաճախ շեշտը դրվում էր նրա անհատականության ու որոշ «սուբյեկտիվ» մոմենտների վրա, եւ բնութագրումների հումորը վերածվում էր ատելազմի, հակակրանքը միախառնվում էր արհամարհանքին:

Հայոց ղեկավարի այցը շահեկացի հայերս հաստատես ունենք այդ մտավախությունը, որ եթե Ռուսաստանի հետ նման լայնածավալ մերձեցումը իրականացվեր հիշյալ «բելոռուսական» սցենարով, մեզ չէր հաջողվի խուսափել հակահայկական (չասենք հակատերրորիստական) քսմնելի կամոնանիայից:

Կարելի է առարկել, որ Հայաստանը Բելոռուսիա չէ: Բայց մյուս կողմից դե ֆակտո արձանագրվում է այն իրողությունը, որ ի դեմս Հայաստանի Ռուսաստանը Անդրկովկասում (Կովկասում) ձեռք է բերում միակ հավատարիմ դաշնակցի: Քիչ չէ:

Այնուհանդերձ, որ հայ դիվանագիտությունը կարող է հավակնել տեղի ունեցածը համարելու իր նորաբուխ դաշտության դայծառ էջերից մեկը:

Ինչ-որ տեղ Լեւոն Տեր-Պետրոսյանի այցը այստեղ դիտվում էր... Ալիեւի այցի ֆոնի վրա, այն իմաստով, թե ինչով կտարբերվեն դրանք իրարից տոմով, ժոլիտների ու համբույրների քանակով, հաճոյախոսության աստիճանով, հանդիպումների տեւողությամբ, ստորագրված փաստաթղթերի իրական արժեքով եւ այլն: Ի դեպ, այստեղ համոզված են, որ Ալիեւ

ԱԶԳ

Ոչ տեսակետ կարդացվեր

Մեծ գեղարվեստական դարաշրջաններն ասում են Արվեստ. անգույն դարաշրջաններն ասում են արվեստներ. Մորիս

Մեծ խորհրդային երկիրը մասսայական արվեստի պատվիրատուն էր, եւ խորհրդային մեր երկիրն ուրիշ խնդիրներ ունի: Դրանցից առաջինը սաստած ժառանգությունը պահպանելն է: Պահպանել շենքերը, արվեստի գործերը, կոլեկտիվները, մշակութային ներուժը, վերջապես՝ ստեղծագործելու ցանկությունն ու ոգին: Անցումային դժվար ժամանակաշրջանում, երբ այս խնդիրը կիրագործվի, ինքնըստինքյան կիրականանան նաեւ հաջորդ խնդիրները՝ նոպաստել մշակույթի զարգացմանը եւ տարածել հայ մշակույթը Հայաստանի սահմաններից դուրս: Անցած 6-7 տարիներին, պահպանության խնդրին զուգահեռ, մշակույթի ասպարեզում իշխել է պետական մտածողության մի տեսակ, որի հավատամքը հետեւյալն էր. «Չմիջամտել մշակութային պրոցեսների բնականոն զարգացմանը» (նախկին նախարար Հակոբ Մովսեսի պատկերավոր խոսքերով՝ «Չխանգարել, որ մեռնի, եւ օգնել, որ ծնվի»): Սա նշանակում է մշակույթի մեջ եւս հայտարարել ազատ մրցակցություն, տուկայական հարաբերությունների մուտ, որտեղ առաջարկ-պահանջարկի գայլային օրենքներն են գործում, որտեղ պետությունն անելիք չունի, որտեղ պատվիրատուն դեռեւս չձեւավորված, բազում հոգսեր ունեցող մշակութային ցածր պահանջներով հասարակությունն է: Այս ելակետն ընդունելու դեպքում՝ ակամա հանգում ես պետական մշակութային քաղաքականության բացակայության, ուստի, վերջինս իրականացնող կառավարման մարմնի՝ մշակույթի նախարարության ամբողջության մտին:

Մշակույթի նախարարություններ կան աշխարհի փոքրաթիվ երկրներում: Հիմնականում նախկին խորհրդային երկրներում: Ֆրանսիայի մշակութային նախարարությունը հիմնականում արտաքին քաղաքականությանն առնչվող խնդիրներ է լուծում՝ ֆրանսիական մշակույթի, լեզվի տարածում, պրոպագանդում աշխարհում: Եվ դրա համար մեծ ֆինանսական միջոցներ են տրամադրվում: Մեր նախարարությունը տարեկան բյուջեից ընդամենը 1,5 միլրդ դրամ է ստանում, որի գերակշիռ մասը կազմում է համակարգի 6572 աշխատողների աշխատավարձը: Տարեկան մոտ 150-200 միլն դրամ ազատ գումարը, որ ստանում է մշակույթի նախարարությունը մշակութային քաղաքականություն իրականացնելու համար, ծիծաղելիորեն չնչին է: Պատկերացրեք՝ մեկ օպերային ներկայացումը 15-18 միլն դրամ արժե, մեկ թատերական ներկայացումը՝ 4-5 միլն դրամ: Այս է պատճառը, որ տարիներ շարունակ խոսում են մայր թատրոնի տանիքի նորոգման մասին, բայց իրականացնել այդպես էլ չի հաջողվում, որ մշակութային օջախները վթարային վիճակում են, նորոգման ու նորացման կարիք ունեն, բայց քանի դեռ չեն փլվել՝ այդ հարցերը չեն էլ բարձրացվում: Խորհրդային հզոր երկրի կառուցած եւ մեզ այնքան հպարտություն պատճառող շենքերը (Մարզահամերգային համալիր, երիտասարդական պալաս, «Ռոսիա» կինոթատրոն) իսկական չարիք են դարձել համակարգի համար: Շախմատի օլիմպիադային նախորդած ՄԳՀ-ի կոստեղծիկ նորոգումը 1,3 միլն դոլար նստեց: Այս պայմաններում այդ շենքերին նոր ֆունկցիաներ տալու, վերակառուցելու, աղաղակատեսությամբ ընդունվեր: Մինչդեռ մի երկու տարի առաջ արդեն աղեսալի վիճակում գտնվող «Ռոսիա» կինոթատրոնը Ֆոնդային բորսայի կողմից գնվելու առաջարկը, չգիտես ինչու, մերժվել է: Ասում են՝ այժմ ոչինչ անել հնարավոր չէ: Դրանց վերակառուցումը հսկայական գումարներ կպահանջի: Մնում է սպասել, մինչեւ այդ շենքերը դատարկությունից ու չօգտագործվելուց քանդվեն, փլվեն եւ նրանց մահը նոր ծնունդի հիմք հանդիսանա:

Աղեսալի վիճակում են ոչ միայն շենքերը, այլեւ՝ թանգարանային նմուշները: Տարիներ շարունակ ջերմասիծանային մեծ տատանումներ տեսած հնամենի իրերը, կտավները, մասնագետների կարծիքով, աչքի առաջ քայքայվում են: Իսկ թանգարաններում ու պատկերասրահներում ոչ միայն հովացուցիչներ ու ջեռուցիչներ չկան (հարկավոր է 18-20 աստիճան կայուն ջերմություն ապահովել), այլեւ վերականգնող վարպետների (restavրատորների) մեծ պակաս կա: Ի դեպ, restavրատորներ մեզանում չեն պատրաստում:

Թանգարաններ, գրադարաններ

Նման աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունն ու հնարավորությունը ավելի է նվազում՝ կաղված այցելուների քանակի կրճատման հետ: Այստեղ վիճակն ավելի քան ողբերգական է: Վիճակագրական ստույգ թվեր չկան, բայց նախկին այցելուների մոտ 5 տոկոսն է այսօր հաճախում թանգարան, պատկերասրահ, գրադարան, կինո եւ թատրոն: Դրան գումարենք նաեւ մուտքի տոմսի խորհրդանշական արժեքը՝ 50-100 դրամ (Լուվրում տոմսն արժե 8 դոլար, մոսկովյան թանգարաններում՝ 4-5), եւ պարզ կդառնա, որ արտաբյուջետային գումարներ մշակույթի օջախներ չեն մտնում: Թանգարանում ու պատկերասրահում, գրադարանում ու թատրոնում կրթվող սերունդն այսօր փողոցում է դաստիարակվում, մշակութային արժեքների հետ չի շփվում, հոգեւոր սնունդ չի ստանում: Հետեւանքը անհոգի, մակերեսային, բոյեւիկ նայող երիտասարդության աճն է: Դպրոցներում ընդունված կոլեկտիվ կինոդիտումները, թանգարան ու թատրոն այցելելու ավանդույթները նույնպես սնսաքել են անցյալում: Պարզվեց՝ հնամյա թատրոնով հպարտացող, գիր ու գրականություն, մշակույթ ու հոգեւոր արժեքներ պաշտող մեր ժողովրդի համար 2-3 անլույս ու դժվար տարին բավական էր, որպեսզի մոռացվեին այդ ավանդույթները:

Ինչ վերաբերում է արվեստի հովանավորչությանը: Թվում է՝ ամեն քայլափոխի բացվող ռեստորան-խանութների տերերը պիտի իրենց վաստակն ազնվացնելու, հոգեւորին ծառայելու ճանապարհով գնային, բայց հայ հասարակության մեջ մշակույթի մեկենաս հասկացությունը մտացածին կատեգորիա է: Հայ բիզնեսմենը դրամը ծախսում է ամեն ինչի վրա, բայց՝ ոչ հոգեւոր ոլորտում: Եւ քանի դեռ մենք մեր անցյալի մշակութային նվաճումներով պարծենալու եւ մեզ հոգեւոր ազգ հորջորջելու սնապարծությունից չենք ազատվել, հոգեւոր վերելքի մասին խոսք անգամ լինել չի կարող:

Իսկ վերածնունդը պիտի սկսվի քայլ առ քայլ: Նախ պիտի վերականգնվի (եւ դրանում մեծ է Մշակույթի նախարարության դերը) դպրոցական տարիքի երեխաների մշակութային օջախներ այցելելու սովորույթը: Թող երբեմն դա պարտադրման ճանապարհով կատարվի, հետո ամեն ինչ իր տեղը կընկնի: Գործունեության նոր ձեւեր պիտի փնտրվեն: Գրադարան-դպրոց կապը պիտի վերականգնվի, թանգարանային բուկլետներ ու հուշաքարտեր պիտի տպագրվեն: Վերջապես՝ թերթ ու ամսագիր հրատարակվի (այսօր ոչ մի մշակութային պարբերական չի տպագրվում):

Վիճակը վատ է նաեւ հանրապետության 1100 գրադարաններում, որոնց մեծ մասն արդեն մարզային եւ համայնքային պատկանելություն ունի: Յուրաքանչյուր մարզում մեկ բազային եւ Ազգային, երաժշտական գրականության ու Խնկո Ապոր գրադարաններն են մնացել նախարարության տնօրինության տակ: Ընդհանրապես նախարարությունը վերջին տարիներին գնացել է իր օբյեկտներից ազատվելու ճանապարհով (օրինակ, երաժշտական եւ մարզադպրոցները):

Մշակութային բոլոր ոլորտներում տիրող ողբերգական վիճակը երկարատեւ ջանքեր ու ֆինանսական մեծ ներդրումներ է ենթադրում: Բայց անգամ այն, ինչ հնարավոր է, այդ էլ կիսաս-պռաս ու վաս է կատարվում:

Թատրոն

Տասներեք պետական թատրոն է գործում մեզանում (Ֆրանսիայում 90 թատրոնից 5-ն է պետական), որտեղ 1851 աշխատող կա: Միջին աշխատավարձը 5-6 հազար դրամ է: Անցյալում տարեկան 2 միլն 800 հազար այցելու ունեցող թատրոններն այժմ 340 հազար հանդիսատես են ընդունում: Դատարկ կամ կիսադատարկ դահլիճներում ներկայացում տվող թատրոններից, ըստ նախարար Արմեն Սմբատյանի, հավանաբար հետագայում պետական հովանավորություն կվայելեն Սունդուկյանի անվան պետականն ու դրամատիկական թատրոնները: Վերջին շրջանում անշլաց արձանագրվել է հատուկենտ տեղերում (մեկը «Խաբաբալադա» ներկայացումն էր): Ցրագրվում է «Մեր բակը» վերածել բեմական ներկայացման: Սեպտեմբերի 12-ին կբացվի Մայր թատրոնի 75-րդ թատերաշրջանը: Նախարարը հպարտությամբ նշեց. «Ես հավանում եմ «Կտակը» եւ ուրախ եմ, որ Մայր թատրոնը երեք ներկայացումով վերսկսում է գործունեությունը», սակայն բոլորովին այլ կարծիքի է թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը: «Նախարարությունն ուզում է գոնե ձեւականորեն պահպանել մեռած մի օրգանիզմ: Երկու տարի առաջ Սունդուկյանի անվան թատրոնը փաստորեն ինքնալուծարքի ենթարկվեց: Երկու տարում մուտքի առաջ խոտ էր աճել: Այդ ընթացքում միայն բուֆետն է աշխատել: Այսօր թատրոնը բացվում է սգահանդեսով՝ անհաջող կազմով, անհաջող պիեսով: Մեծ միջոցներ են ծախսվել մի ներկայացման վրա, որի բուն իմաստը՝ պիեսում դրած ծաղը բեմադրիչը չի հասկացել: Երկու տարի առաջ ես նախարարությանը ներկայացրեցի իմ առաջարկները Մայր թատրոնի վերաբերյալ՝ հանձնաժողով ստեղծել, մրցույթով ընտրել լավագույն, սահմանափակ կազմ, բեմադրիչներ հրավիրել դրսից, հոնորարներ վճարել: Ապարդյուն: Այսօր թատրոնը ղեկավարում է թեեւ հավասարակշիռ, բայց պրոֆեսիոնալ առումով դիլետանտ անձնավորություն»:

Կինո

Կինոյի բնագավառում առկա խնդիրները փոխնախարար Միխայել Սամբոլցյանը բաժանեց երեք մասի՝ պահպանել կինոարտադրության մակարդակը եւ տեխնիկական բազան, ապահովել հայկական ֆիլմերի մասնակցությունը միջազգային փառատոներին եւ իրականացնել «Հայֆիլմի» ֆոտո, ֆոնո նյութերի պահպանություն:

Մեծ հպարտությամբ նշվում է «Հայֆիլմի» տանիքի նորոգումը: Իսկ որ այդ տանիքի տակ գրեթե ոչինչ չի նկարահանվում, թեեւ 200 աշխատող կա, կարծում են՝ ժամանակավոր երեւույթ է: Այս տարի ավարտվել է երկու ֆիլմի նկարահանում (Վիգեն Չալդրանյանի «Տեր ողորմյան», որը նկարահանվում էր չորս տարի, եւ Էդգար Բաղդասարյանի «Սեւ պատը»): Նոր ֆիլմի նկարահանում 1997-ին չի սկսվել: Արդեն հինգ տարի շարունակվում են Սուրեն Բաբայանի «Բարաբայի» նկարահանումները: Երկու կարճամետրաժ ֆիլմ է նկարահանվել. Արմեն Ղովլաթյանի «Անուրջները» եւ Ներսես Ներսիսյանի «Երգեհոնային համերգը»: 1996-97 թթ. ոչ մի մուլտֆիլմ չի նկարահանվել, 1995-ին՝ մեկը (Արմեն Մանարյանի «Մարդը» հեքիաթից): Մեկ լիամետրաժ ֆիլմի վրա ծախսվում է 250 հազար դոլար, մոտ 50 հազար դոլարով կարելի է մուլտֆիլմ նկարահանել: Ընդհանրապես կինոինդուստրիան ամենաթանկ եւ ռիսկի ամենամեծ գործոն պարունակողներից է: «Մոսֆիլմի» արտադրանքը հեռուստատեսություններին վաճառվում է 20 հազար դոլարով, «Հայֆիլմինը» տեղական հեռուստատեսությունը գնում է 300 դոլարով: Մեր կինոգործիչները դրսում ֆիլմեր ցուցադրելու, վաճառելու ոչ մի հնարավորություն չունեն: «Կահիրեի» 1996 թ. կինոտուկային մասնակցելու գումարը չճարվեց (ընդամենը 5 հազար դոլար): Մինչեւ կինոյի ասպարեզում չհայտնվեն կինոտրոյուստերներ, երաժշտության մեջ՝ իմպրեսարիոներ, կերպարվեստում՝ մենեջերներ, մշակույթի մուտքը շուկա փակ է, եւ մշակութային գործունեությունը՝ որպես բիզնեսի տարատեսակ, չի կայանա: Միեւնույն ժամանակ բարձրորակ գովազդ պիտի արվի, լուրջ արվեստաբաններ պիտի աշխատեն: Իսկ այսօր տարերային շուկան, չուսումնասիրված պահանջարկը թելադրում է ցածր, էժանագին արվեստի գոյություն, որտեղ տնօրինում են Արամ Ասատրյանը, պոռնոֆիլմերը, 10 բոպեում խզբզված նատյուրմորտները եւ խոստիկյանական ներկայացումները:

Կինոթատրոններից միայն չորսն է մնացել պետական՝ «Մոսկվա», «Այրարատ», «Զանգակ» («Պիոներ»), որն այժմ ազգային ֆիլմադարանին է պատկանում եւ «Հրազդան», որտեղ օրը մեկ «Հայֆիլմ» կինոնկար է ցուցադրվում: Մյուս կինոթատրոնները սեփականաշնորհված են՝ «Սեւան»-ը եւ «Կոմիտաս»-ը (վերջինս 700 հազար դոլարով է գնվել) առեւտրի կենտրոններ են դարձել, «Երեւան»-ը միայն էրոտիկ ֆիլմեր է ցուցադրում, «Արագածն» ու «Անին» փակ են, իսկ «Նաիրին» քաղաքապետարանին է պատկանում: Ֆիլմերի ներկրումը գնալով նվազում է: Եթե նախկինում տարեկան 300 ֆիլմ էր ներմուծվում, ապա 1995-ին՝ 24, իսկ 1996-ին՝ ոչ մի ֆիլմ չի բերվել: Մեկ ֆիլմի պատճենահանումը 1000 դոլար արժե, ինչը դահլիճների հագեցման 5-8 տոկոսի պայմաններում անմատակարար է: Իսկ աշխարհն անցել է կինոցուցադրման նորագույն սկզբունքներին, որոնք այնքան մեծ էֆեկտ են տալիս (էկրանի մեծություն, հնչյունային համակարգ), որ տեսաֆիլմերն այդ մրցակցությանը պարզապես չեն դիմանում: Մինչեւ 600 տեղանոց մուլտիպլեքս տիպի կինոդահլիճները լիովին արդարացնում են իրենց եւ նորմալ եկամուտ ապահովում: Սակայն ակնհայտ է, որ նման դահլիճներ մոտ ապագայում մեզանում չեն ստեղծվի:

Կերպարվեստ

Այստեղ պետական մշակութային քաղաքականությունը հանգում է ցուցահանդեսներ կազմակերպելուն: Վերջին մեկ տարում 5-6 պատկերասրահ է բացվել՝ հիմնականում չգործող (Մարտունիում, Ստեփանակերտում, օրերս կբացվի Գյումրիում), ցուցադրություններ կազմակերպվում են նաեւ Հայաստանից դուրս (Չինաստանում, Ռուսաստանում, Հունաստանում): Երբեմն դրանք ուղեկցվում են նաեւ վաճառով: Սակայն, որպես կանոն, նկարիչներն իրենք են զբաղվում իրենց աշխատանքների ցուցադրություն-վաճառով: Դա հատկապես մեծ թափ առավ երեք-չորս տարի առաջ, երբ դրսից մեծ էր հետաքրքրությունը նախկին խորհրդային արվեստի նկատմամբ: Այդ շրջանում Հայաստանը կերպարվեստի գործերի էժան շուկա էր դարձել. մեծ թվով գործեր անարգել դուրս բերվեցին երկրից: Որեւէ հսկողություն այն ժամանակ չկար, իսկ այսօր էլ նախարարության մշակութային արժեքների պահպանության վարչության աշխատանքներից մեծ դժգոհություն կա: Այդ վարչությունում, ասում են, իրերի գնահատումը մշտապես գերազանցում է իրական արժեքը: Պատճառը պարզ է՝ վարչությունը վարձատրվում է պետական զանձարան մուծված միջոցներից: Բարձր է նաեւ տուրքի չափը՝ 20 տոկոս:

Մշակութային գործիչների մեծ արտահոսք է տեղի ունեցել երկրից: Մի կողմից դրական դեր է խաղացել՝ աշխարհաճանաչողության եւ պարզապես մասնագիտական կատարելագործման առումով (մնացողների մի մեծ խումբ պարզապես մասնագիտական «վերադրակավորման» է դիմել): Մյուս կողմից՝ մեր մշակութային կյանքի աղքատացման է հանգեցրել: Այս առումով պետությունը որեւէ դեր չի խաղացել: Ընդհանրապես մշակույթի բնագավառում տարվող պետական քաղաքականությունը (եթե այն կա), սահմանափակվելով աշխատավարձի (որն իրականում սոցիալական նպաստ է) վճարմամբ, հանգեցրել է մրցակցության բացակայության, բազմաթիվ եւ նույն վիճակում գտնվող օղակների գոյատեւման, որոնք զարգացման, վերակառուցման խնդիր չեն դրել իրենց առաջ: Ընդհակառակը, դրանք կարող են խեղդել իրենց մեջ պատահաբար հայտնված ամեն մի կենդանի օրգանիզմ (Լորիս Ճգնավորյանի եւ նրա խմբի նկատմամբ վերաբերմունքը ձեզ օրինակ): Շուները, համերգները, զանգվածային միջոցառումները, սպորտային իրադարձությունները եւս բացակայում են: Երկար ու տեւական ամայության շրջան է: Եւ եթե որոշ աշխուժություն վերջին շրջանում նկատվում է, ապա միայն իբրեւ տնտեսության մեջ նկատվող չնչին աշխուժության հետեւանք:

Նախարարություն

Այցելածս նախարարություններից ամենաանգործն ու, ըստ իս, ամենանիմաստը մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունն է: 107 աշխատող կա աշխատակազմում (ամենամեծ նախարարությունն է), 11 վարչություն (անցյալում 20-ն էր), 6 փոխնախարար: Բայց այս հսկա ապարատից որեւէ տվյալ, թիվ, փաստ, վերլուծություն ստանալն անհնարին է: Աշխատողները գալիս են ժամը 10-ից հետո, իսկ կեսօրվա ընդմիջումից վերջ սենյակները փակ են: Գրեթե ոչ մի այցելու չկա: Կարող ես երկու ժամ նստել փոխնախարարի կամ վարչության պետի առանձնասենյակում, եւ հեռախոսը ոչ մի անգամ չի հնչի, դուռը ոչ մի անգամ չի բացվի:

Ոչ մի օրենք, օրենսդրական ակտ մինչ օրս ընդունված չէ (սեպտեմբերին ծրագրում են թանգարանների, գրադարանների, մշակույթի տարբեր տեսակների քննարկումն ու ընդունումը): Որեւէ տեղեկատվություն ստանալու փորձերդ ավարտվում են նախարարի մոտ ուղարկելով: Ինքը նախարարը դժգոհ է աշխատակազմից, ասում է. «Բոլորն ավիասմինոզ ունեն»: Հիմնականում աշխատում է իր բերած մեկ կադրի ֆինանսական հարցերով փոխնախարարի հետ: Դժգոհ է, բայց, չգիտես ինչու, կադրային եւ խոշոր կառուցվածքային փոփոխություններ 10 ամսում չի արել: Ասում է՝ «հիվանդագին պրոցես է, եւ ես արագ լուծումներ չեմ տալու»: Սակայն, թե ինչ է արել պատասխանավարման ողջ ընթացքում, ինձ այդպես էլ պարզել չհաջողվեց (չհաշված ցուցահանդեսներն ու մշակութային մի շարք միջոցառումները): 1997 թ. սեպտեմբերին նախարարի առաջ դեռեւս կանգնած է հեռեւյալ հարցը. ո՞ւր ենք գնում, ի՞նչը պիտի պահպանենք մեր ժառանգությունից եւ ո՞րն է ծամարիտը: Թվում է՝ համակարգի աղեսալի վիճակը, չնչին ֆինանսավորումը եւ աշխատակազմի ապաշնորհությունը ապագայի նկատմամբ անհուսություն են ծնել մեծ ծրագրերով ու խանդավառությամբ եկած նախարարի մեջ: Այդ է վկայում նաեւ կոնսերվատորիայի ռեկտորի պատասխանից չհրաժարվելու փաստը:

Նման աշխատակազմ եւ նախարարություն պահել, երբ մշակութային բնագավառի կառավարումը հանգում է աշխատավարձ (այն էլ ուշացումով) տրամադրելուն, թվում է, անիմաստ է: Իսկ կենտրոնական աշխատակազմին այս տարի հատկացվել է 62 միլն դրամ (մնացած բոլոր մշակութային հիմնարկներին՝ 427 միլն դրամ): Եվ ընդհանրապես, որքանո՞վ է նպատակահարմար մեր պետության համար պահել 100 մշակութային օբյեկտ՝ դրանց վճարելով չնչին գումարներ: Գուցե շատ ավելի ծիծաղելի կլիներ դրանց փոխարեն պահել 10-ը, բայց՝ լիարժեք: Բոլոր այն խնդիրները, որ իր առաջ դնում է նախարարությունը, կարող են իրականացնել մունիցիպալ իշխանությունները, իսկ պետությունը կազատվի ոչ միայն ուռճացված հաստիքներից, այլեւ հարկատուի հաշվին ավելորդ աշխատակազմ պահելու հոգսից:

ԱՐՄԵՆ ՕՏԱՆՅԱՆ
«Երեւան» տեղեկատվական կենտրոն

Մեր նախարարությունները ներսուդրսից

Յո՞ երթաս, հայ մշակույթ

Որ հայկական մշակույթը չդառնա ձեւական զարդ ՀՀ արտաքին ճակատին

ԱԶԳ

Միջազգային

Ի՞նչ նպատակ է հետապնդում Իրանի սպառազինության վերաբերյալ քարոզչական նոր ալիքը

Վերջին շրջանում Թել Ավիվն ու Վաշինգտոնը հերթական անգամ առաջ են քաշել Իրանի սպառազինման սպառնալիքի հարցը. Ռուսաստանին մեղադրելով փորձարկման ընթացքում գտնվող 1500 կմ հեռահարության բալիստիկ հրթիռների արտադրությունը կազմակերպելու գործում Իրանին բազմակողմանի աջակցություն ցուցաբերելու մեջ, որոնց նշանառության տակ կարող են գտնվել Իսրայելի որոշ հատվածներ: Միաժամանակ, Թել Ավիվը Մոսկվայից պահանջեց հրաժարվել Իրանի հետ սպառազինության եւ միջուկային էներգետիկայի ոլորտներում համագործակցությունից, ինչը զգալի լարվածություն առաջացրեց ռուս-իսրայելական հարաբերություններում: Այնուհետեւ Իսրայելի վարչապետ Նաթանյահուն օգոստոսի վերջին (25-30-ը), Հեռավոր Արեւելք կատարած իր շրջագայության ընթացքում, Իրանի «սպառնալիքի» հարցը քննարկել է Պեկինում ու Տոկիոյում:

Նկատի ունենալով այսօր շրջանում տիրող իրավիճակը, բացառված չէ, որ Իրանի սպառազինության հարցը կրկին օրախնդիր դարձնելու նպատակներից մեկը նաեւ միջինարեւելյան խաղաղության տաղալված գործընթացի քննարկումները երկրորդ պլան մղելն է եղել: Սեպտեմբերի սկզբին, ի լրումն Իսրայելի արծարծած հարցի, «Վաշինգտոն պայմս» օրաթերթը, վկայակոչելով ԱՄՆ ծովուժի տեղեկատվության բաժնի հետազոտական կենտրոնի տվյալները, ընդգծել է, որ Չինաստանը երրորդ աշխարհի միջուկային, քիմիական եւ բիոլոգիական զենքեր արտադրելու տեխնոլոգիաների մատակարարն է, այդ թվում՝ Իրանի եւ Իրաքի, որոնք գտնվում են ԱՄՆ-ի հակորդածը, իսկ սպառազինության բնագավառում թե քանակի եւ թե որակի առումներով Պարսից ծոցի երկրները, մասնավորապես Սաուդյան Արաբիան, մի քանի անգամ գերազանցում են Իրանին, որի սպառազինումը իբր թե առաջին հերթին սպառնում է հենց այդ երկրների անվտանգությանը:

Իրանի 1500 կմ հեռավորությամբ բալիստիկ հրթիռների արտադրությունը կազմակերպելու մասին առաջին հրապարակումը եղավ 1997 թ. ապրիլի 13-ին, երբ Իսրայելի օդուժի միացյալ շտաբի պետը հայտարարեց, որ Իրանը ռուս մասնագետների օգնությամբ արտադրել եւ ցամաքում փորձարկել է 1500 կմ հեռավոր գործողության բալիստիկ հրթիռ, որի թիրախը կարող է դառնալ Իսրայելը: Այս տեղեկատվությունն այնուհետեւ հաստատում գտավ նաեւ Վաշինգտոնում: Այն դեպքում, երբ Ստոկհոլմի խաղաղության ինստիտուտի հետազոտությունների համաձայն, Թեհրանը մտադրություն չունի մինչեւ 2000 թ. սկսել հեռավոր գործողության հրթիռների արտադրությունը (BBC, ապրիլի 19): Իրանի հրթիռաշինության վերաբերյալ տեղեկատվության հրապարակմանը (որով սկիզբ առավ Իրանի սպառազինության առնչությամբ քարոզչության նոր ալիքը) հաջորդեց Սաուդյան Արաբիայի հրթռային համակարգի արդիականացման շուրջ տեղեկատվությունը, ըստ որի Էր Ռիադը չինական արտադրության հրթիռների փոխարեն տեղակայելու է 3000 կմ հեռավոր գործողության գերժամանակակից հրթիռներ, որոնք Միջին Արեւելքում եզակի են լինելու: Երեւույթ, որը հիմք ծառայեց եզրակացնելու, թե Միջին Արեւելքում ծայր է առնում սպառազինության նոր մրցավազք: Թեեւ արտաքուստ թվում է, թե Իրանի հրթիռաշինության հարցի շուրջ քարոզչության ծավալումը Թել Ավիվի եւ Վաշինգտոնի կողմից հանգեցրել է դրան, սակայն հետեւելով միջինարեւելյան նոր զարգացումների ընթացքին, կարելի է կարծել, որ նաեւ այլ նպատակներ է հետապնդում:

1997 թ. հունիսի 14-18-ը ԱՄՆ պաշտպանության նախարար Ուիլյամ Քոհենը 5-օրյա շրջագայության ընթացքում՝ Սաուդյան Արաբիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Օման եւ Բահրեյն, բազմիցս անդրադառնալով խնդրո առարկա հեռավոր գործողության հրթիռների հարցին, Իրանին ներկայացրեց որպես շրջանի համար լուրջ սպառնալիք: Մինչդեռ վերջիններս Իրանին այլեւս չեն դիտում որպես լուրջ սպառնալիք: Սա այն դեպքում, երբ շուրջ 1 շաբաթ հետո, հունիսի 24-27-ը Թել Ավիվում կայանալու էր սպառազինությունների դոնփակ համաժողով, որին մասնակցում էին 20 երկրների 500 ներկայացուցիչներ. Համաժողովի գլխավոր թեման միջմայրցամաքային հրթիռներն ու հակահրթռային համակարգերն էին: Համաժողովին ներկայացվեց ԱՄՆ-Իսրայել համագործակցությամբ «Արրոդ» հակահրթռային համակարգի արտադրության նախագիծը, որը կյանքի կկոչվի մինչեւ 2000 թվականը: Բացի այդ, հիշյալ երկրները համատեղությամբ արտադրելու են նաեւ հակաօդային նոր համակարգ, որ աշխատելու է լազերային ճառագայթներով եւ նախատեսված է ոչնչացնելու Լիբանանի հարավում տեղակայված «Հեզբոլլահի» «Կատյուշա» տիպի հրթիռները (BBC, հունիսի 24):

Վերադառնալով Իրան-արաբական աշխարհի հարաբերություններին հարկ է նշել, որ 1997 թ. մարտի 9-ից ի վեր, երբ Իրանի ԱԳ նախարարը Սաուդյան Արաբիա այցելեց, երկու երկրների փոխհարաբերություններում նկատելի դարձավ սերտացման միտումը, իսկ Իրանում նոր նախագահի՝ Մոհամեդ Խաթամիի ընտրությունը լուրջ խթան հանդիսացավ դրանց բարելավման հարցում: Թեեւ էր Ռիադը Թեհրանին մշտապես վերաբերվել է զուսպ եւ զգուշավոր, այսուհանդերձ վերջին շրջանում, Իրանում Խաթամիի իշխանության գալուց ի վեր, այդ երկրի զանգվածային տեղեկատվության միջոցներում, որոնք իշխանությունների վերահսկողության տակ են, շատ հաճախ են հանդիպում Թեհրան-էր Ռիադ փոխհարաբերությունների ընդլայնմանը եւ ամրապնդմանը վերաբերող նյութեր: Այս ուղղությամբ առկա են նաեւ գործնական քայլեր: Մյուս կողմից, Թեհրանը, որ վերջին տարիներին ձգտում է Պարսից ծոցի ավազանի արաբական երկրների հետ բնաբնակ ավելացրել է, որ Թուրքիան դարձյալ սկսել է խախտել միջազգային դաշնագրերը՝ խուզարկելով միջազգային ջրային տարածքով անցնող նավերը:

Համաշխարհային բանկից 1,5 մլրդ դոլար օգնություն Թուրքիային

Թուրքիայի ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ նախորդ շաբաթ Համաշխարհային բանկի հետ կայացած բանակցությունների արդյունքում՝ առաջիկա երեք տարիներին 1,5 մլրդ դոլար օգնություն կհատկացվի Անկարային: Նշվում է սակայն, որ մերժվել է շուրջ 3 մլրդ դոլար վարկ վերցնելու Թուրքիայի դիմումը: Համաշխարհային բանկը շեշտել է, որ վարկը տրամադրելուց առաջ Թուրքիան պետք է իրագործի Միջազգային դրամական հիմնարկի տնտեսական բարեփոխման ծրագիրը հատկապես ընկերային ապահովության եւ տուրքերի գանձման ասպարեզներում:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստան. Եղեմական կղզի ՉԺՀ վերնախավի համար

Չինաստանի ծայր հարավ-արեւելքում գտնվող արեւադարձային Հայնան կղզին, որն ունի 34 հազար քառ. կմ մակերես եւ 7 մլն բնակչություն, վերջին տարիներին դարձել է երկրի կուսակցական ղեկավարների եւ նրանց բարձրաստիճան հյուրերի նախընտրելի հանգստավայրը: «Չայնը սիրի» շքեղ հյուրանոցի ճեմարահում կարելի է տեսնել վարչապետ Լի Պենի եւ արտգործնախարար Ցյան Ցիչենի զվարթաղեմ լուսանկարները:

Չին ժողովրդի մեծարգո ղեկավարները շաբաթավերջի հանգստյան օրերը սովորաբար անցկացնում են կղզու հարավում. Յալոնգի ծովածոցի ափին կառուցված «Գլորիա ռիսորթ» հինգ աստղանի հյուրանոցում: Նախկին ծովային հենակետի տարածքում 1996 թ. օգոստոսին շահագործման հանձնված շինությունը կառուցվել է Հոնկոնգի կապիտալներով: Հյուրանոցն ունի 400 սենյակ, 10 հարկաբաժին, 8 կիլոմետրանոց մասնավոր լողափ, ջրավազաններ, թենիսի եւ գոլֆի խաղահրապարակներ եւ այլն: Այս տարի «Գլորիա ռիսորթում» երկու անգամ հյուրընկալվել է Դեն Սյաոպինի ավագ որդին Դեն Պուֆանը: Չին նախարարները եւ քաղբյուրոյի անդամները կղզում որոշակի տվորույթներ են մշակել եւ հաճախ այնտեղ հանգստանալու են հրավիրում օտար դեսպանությունների ղեկավարներին: Այսպես, Հայնանում հյուրընկալվել են Լաոսի եւ Տաջիկստանի նախագահները, որոնց քաղաքական վարագիծը, Պեկինի վարչակազմի կարծիքով, անբասիր է: Ինչ վերաբերում է Ղազախստանի ղեկավար Նուրսուլթան Նազարբաեւին, տիկնոջ հետ Հայնան մեկնած նախագահն այնքան գերվեց կղզու հմայքներով, որ երկու շաբաթով երկարաձգեց իր արձակուրդը:

«Գլորիա ռիսորթ» հյուրանոցն արդեն դժվարությամբ է կարողանում տեղավորել բոլոր հաճախորդներին: ՉԺՀ կուսակցական-պետական նոմենկլատուրայի ներկայացուցիչներ օտար դեսպանությունների ղեկավարներ, հարուստ գրասենյակներ: Ինչպես տեղեկացնում է «Էքսպրես» հանդեսը, շուտով դրա մոտակայքում կավարտվի նախագահական առանձնատան շինարարությունը:



Երբ վարչակազմի բարձրաստիճան ղեկավարները Հայնանում առանձնատներ ունեն, աղա ունեւոր գրասենյակների համար տասնյակ հյուրանոցներ են կառուցվել կղզու հարավարեւելյան ափին: Կղզին հրաշալորեն է բազմաթիվ չին նորահարուսների, որոնք հաճախ չեն կարողանում այցելել ստանալ օտար երկրներ մեկնելու համար: Հայնանը հանգստի ու ժամանցի նախընտրելի վայր է նաեւ ճաղոնացի, կորեացի գրասենյակների, ինչպես նաեւ Հոնկոնգի շինարարների համար:

Միայն ծովն ու բարեկարգ լողափերը չէ, որ հրապուրում են հյուրերին: Հայնանը վերջին տարիներին դարձել է «սեքսուալ» գրասենյակների կենտրոն: Կղզու իշխանությունները փաստորեն հանդուրժում են դրանց գործունեությունը, թեեւ կոմկուսը ժամանակ առ ժամանակ «կարգի է հրավիրում» հյուրերին, օրինակ, արգելում է «տղամարդ կանց մերոնը կանանց կողմից»: Կղզու հարավում գտնվող Սանյա քաղաքի վաղցներում շարված աղջիկներ հաճախորդներ են որսում «վարազվիրանոցների» մոտերի մոտ: Ընդորում, այդ հասատությունները գրեթե չեն քողարկում իրենց գոյության բուն իմաստը:

Պեկինն այս իրավիճակը չէր կանխատեսել: 1988 թ. Դեն Սյաոպինը մտադրվել էր ամբողջ երկրում ստեղծել «բազմաթիվ Հոնկոնգներ»: Մասնավորապես Հայնանը հռչակվեց տնտեսական հատուկ գոտի եւ առանձին նահանգ: Հինգ տարում մեկ միլիոն մարդ տեղափոխվեց կղզի: Տեղացի կառավարիչները հավակնում էին Հայնանը դարձնել Հոնկոնգի եւ Թայվանի հետ մրցակցող առեւտրաֆինանսական կենտրոն: Բայց արդյունաբերողները նախընտրեցին ներդրումներ անել Շանհայում եւ այլ քաղաքներում, իսկ Հայնանը գործարար մարդկանց համար մնաց լոկ որպես ծովափնյա հանգստի ու ժամանցի վայր: Կղզու զարգացման ներկա ընթացքը հիշեցնում է ավելի շատ բալեանդական «բեժ» լողափ Պատայայի, քան Հոնկոնգի դասմությունը:

Երբեմնի ամտոռավայր Հայնանն այսօր դարձել է «բաղդ կյանքի» եւ սեխ-բիզնեսի խորհրդանիշ: Գործարարների ու ձեռնարկությունների առնվազն շեմերը մնում են որպես 1990-ական թթ. սկզբների անհեռանկար հույսերի լուռ վկաներ:

Դ. Բ.

ԱԶԳ

Ադրբեջանը գաղտնի տեղեկություններ է հայտնում Թուրքիային

Կիպրոսի կառավարության ներկայացուցիչը հայտարարել է, որ իր երկրի բանակը ռուսական հակաօդային հրթիռները կստանա նշված ժամկետում, թեեւ Թուրքիան սպառնում է խափանել զենքի առաքումը: Նա շեշտել է նաեւ, թե Նիկոսիան ստուգում է այն տեղեկատվությունը, համաձայն որի ամերիկյան, իսրայելյան եւ ադրբեջանական գաղտնի ծառայությունները ռուսական հրթիռների տեղափոխման մասին սկսել են տեղեկություններ փոխանցել Թուրքիային: Խոսնակն ավելացրել է, որ Թուրքիան դարձյալ սկսել է խախտել միջազգային դաշնագրերը՝ խուզարկելով միջազգային ջրային տարածքով անցնող նավերը:

ԱՄՆ-Ճապոնիա. Գերհամակարգիչների պատերազմ

ԱՄՆ առեւտրի նախարարությունը գերհամակարգիչներ արտադրող ճապոնական ֆիրմաներին մեղադրել է ամերիկյան շուկայում իրենց արտադրանքի դեմպինգային (էժանացված) վաճառքի մեջ եւ որոշել է լրացուցիչ մաքսատուրքեր սահմանել ներմուծվող ճապոնական գերհամակարգիչների վրա: Այսպես, NEC ընկերության արտադրանքի հավելյալ մաքսատուրքը կկազմի 454, «Ֆուժիցու» ֆիրմայինը՝ 173 տոկոս, գերհամակարգիչ թողարկող ճապոնական մյուս ֆիրմաներինը՝ 313,5 տոկոս: Որոշումը հաստատեց ճապոնացի արդյունաբերողների այն երկյուղները, որ ԱՄՆ-ի իշխանությունները կարող են ամեն ինչ անել խոչընդոտելու ճապոնական արտադրանքի ներթափանցումն ամերիկյան շուկա, գրում է «Ֆայնենշլ թայմս» թերթը:

Վիճաբանության թեմա է դարձել հատկապես ճապոնական NEC ընկերության արտադրանքը: NEC-ը մերժում է իրեն հասցեագրված մեղադրանքները, պնդելով, որ ԱՄՆ մրցակցային հետազոտությունների ազգային կենտրոնին SX-4 գերհամակարգչի առաքման մրցույթում ինքը հաղթել է ոչ թե մեծենայի էժանացված վաճառքի, այլ դրա բարձր արտադրողականության շնորհիվ: NEC-ի ղեկավարների պնդման համաձայն, ֆիրմայի գերհամակարգիչը հնարավորություն է տալիս աշխարհի բոլոր շրջանների եղանակային պայմանները 9 օրում մոդելավորել առաջիկա 125 տարվա համար: Հիշյալ կենտրոնում ներկայումս օգտագործվող «Քրեյ» ընկերության C90 համակարգչով նույնքիսի հաշվարկներ կատարելու համար պահանջվում է մոտ մեկ ամիս: NEC-ը պատասխան հայց է հարուցել իրեն էժանացված վաճառքի մեջ մեղադրած «Քրեյի» դեմ:

Հոկտեմբերին Միջազգային առեւտրի հանձնաժողովը, թերեւս, որոշում ընդունի այն մասին, որ ճապոնական գերհամակարգիչների իջեցված գները նյութական վնաս են պատճառում ԱՄՆ-ի արդյունաբերությանը: Հակադեմպինգային մաքսատուրքերն ուժի մեջ կմտնեն միայն այդ դեպքում:

Դ. Բ.

ԱԶԳ

Մշակույթ

– Մեկ ամիս է, ստանձնել եմ հանրապետության երաժշտական մշակույթի, թերևս ամենածանր, բազում այլազան համախնդիրներով հագեցած ոլորտը՝ ռադիոն: Միանշանակորեն դարձ է, որ մի շարք դժվարին լուծվող խնդիրներ «ժառանգած» կլինեմ: Դրանցից ո՞րն եք առավել կարևորում:

– Գլխավոր նոյասակներից մեկը հանրապետության երաժշտական ռադիոծրագրերի ազգայնացումն է բառի բովանդակ և ամենաարդի առումներով: Ժողովրդի այսօրվա ծանր սոցիալական, նյութական իմաստ բոլոր ընտրի, թե ինչն է իր համար առավել հոգեհարազատ արտամոս և անհրաժեշտ:

Մեր հանրապետությունը ողողած ռաբիսի դեմ դայքարելու մյուս միջոցը ոլորմեսիոնալ կոմոդոգիտորների կողմից երգեր ստեղծելն է: Հանախ դասասխանում են. «Թող գրեն մենք ոչ թե ռաբիսը, այլ իրենց գրածը կերգենք»:

– Ինչ խոսք, որ բաղաքային երգի ժանրը մեզանում նահանջ է ապրել:

– Հենց այդ դասճառով էլ ճգնում ենք կյանքի կոչել լավ մոռացված հինը նոր ձևով:

Հայաստանի եթերը զուլալ պիտի լինի

Այսօր «Ազգ»-ի հյուրն է Հայաստանի Հանրապետության Ազգային ռադիոյի երաժշտական ծրագրերի տնօրենության տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար **Կարեն Շահինյանը**

Հայաստանի Ազգային ռադիոյի երաժշտական ծրագրերի նոր տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Շահինյանը ծանոթ անուն է մեր մշակութային ասպարեզում: 1985-ին ավարտելով Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան, ապա 1987-ին՝ ասպիրանտուրան (պրոֆեսոր Լեւոն Ալոյանի դասարան), եղել է հիշյալ կոնսերվատորիայի Օպերային ստուդիայի տնօրեն, Հայթեսֆիլհարմոնիայի փոխտնօրեն: Այժմ ղեկավարի իր աշխատանքը զուգորդում է մանկավարժության հետ, դասավանդելով իր հարազատ բուհում, որտեղ նաեւ «Երաժշտական եւ մրցութային ծրագրերի» ղեկավարն է: Ունի մեկ այլ նախասիրություն եւս, այս տարի ավարտել է Երեւանի պետական-կոմպոզիտորական տեխնիկումի իրավագիտության ֆակուլտետը, ստանալով իրավաբանի որակավորում, եւ միտք ունի խորամուխ լինել այդ գիտության մեջ: Երեւանի պետական համալսարանի համադասախան բաժնում: Իսկ երաժշտասեր ունկնդիրը պարբերաբար կարող է հնարավորություն ունենալ ունկնդրելու ձայնասփյուռով տաղանդավոր ֆլեյտահար Կարեն Շահինյանի դասական ստեղծագործությունների անգուգականորեն նրբակերտ խոր երաժշտական կատարումները:

ղայմաններում մշտապես համերգային դահլիճներ հաճախելը էշերին է մաչելի:

Ռադիոհաղորդումների հիմնական ֆունկցիային, ուրեմն, գումարվում է նաեւ այդ մեկը, յուրահատուկ փոխարինող ծառայել կենդանի երաժշտության ունկնդրումներին: Մեր լսարանը ընդգրկում է ողջ հանրապետությունը: Ուստի եւ առաջնորդվելով ոչխի տամբ [illegible] հեռարձակվող երաժշտական նյութի մատրությանը:

– Ակնթարթ է, որ հանրապետության երաժշտական եթերը բավականաչափ աղտոտված է գոեհիկ, օտարամոլ, գեղարվեստական ամենանվազ մակարդակին անգամ չհամապատասխանող «արտադրանքով», որում զգալի տեղը հայկական ռաբիսին է պատկանում:

– Համոզմունքս է, որ ռաբիսը հնարավոր չէ արգելել, ռաբիսի դեմ պետք է դայքարել դաստաճ հակակշիռ ստեղծելով, սա է միակ ճշմարիտ եւ արդյունավետ ճանապարհը:

– Ինչպիսի՞ն են դրա իրագործման ձեւերը...

– Երկու ճանապարհ եմ տեսնում, առաջնայինն է, որ եթեր դիտի հեռարձակվի զտարյուն, զուլալ հայկական երաժշտություն: Այսօր արդեն ունենք մեր տաղանդավոր երաժիշտների ստեղծած հայկական մշակումներ՝ որոնք իրենցից ներկայացնում են հայկական ժողովրդական երգերի ազգային գործիքների մաքրամաքուր հնչեղություններ եւ արդի ոիթմերի, գրեյսոնների բարձրաճաշակ համադրում:

– Ակնհայտ կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի աննախադեպ փորձը՝ սիմֆոնիկ նվագախմբի կազմում հայկական զուռնա օգտագործելը՝ փառահեղ հաջողությամբ դասակվեց: Փորձը ցույց տվեց, որ ժողովրդական նվագարաններ լիիրավ եւ յուրահատուկ գեղեցկությամբ կարող են հնչել եվրոդական դասական նվագարանների համայնդասակերում: Ամեն ինչի գաղտնիքը ճաշակն է:

– Այդդես էլ սիմֆոնիզի մեջ է: Որքան գրավիչ են հնչում հայկական ազգային մեղեդիները նմանատիպ մշակումներում: Բացի այդ, հիարկե, չուրանալով մեր ազգային երաժշտական բանահյուսության ակունքները, եթերում դիտի ավելի շատ հնչեն ժողովրդական եւ ազգագրական երգերը իրենց վաղուցյան ձեւով: Մենք դարտավոր ենք [illegible] այդ, իսկ ժողովուրդն արդեն իմաստ բող բնտրի, թե ինչն է իր համար առավել հոգեհարազատ արտամոս եւ անհրաժեշտ:

Մեր հանրապետությունը ողողած ռաբիսի դեմ դայքարելու մյուս միջոցը ոլորմեսիոնալ կոմոդոգիտորների կողմից երգեր ստեղծելն է: Հանախ դասասխանում են. «Թող գրեն մենք ոչ թե ռաբիսը, այլ իրենց գրածը կերգենք»:

– Ինչ խոսք, որ բաղաքային երգի ժանրը մեզանում նահանջ է ապրել:

– Հենց այդ դասճառով էլ ճգնում ենք կյանքի կոչել լավ մոռացված հինը նոր ձեւով:

– Գոյություն ունի «ծեծված», բայց բավականաչափ գործող կիրառվող սկզբունք, «Նոր ղեկավար նոր կադրեր»...

– Այդ սկզբունքն իմը չէ: Այսօր այստեղ ասած մեր «բիմը» Ազգային ռադիոյի գլխավոր տնօրեն բազմաշնորհ երիտասարդ, ժողովրդի կողմից ճանաչված եւ սիրված Արմեն Ամիրյանի գլխավորությամբ համալրում է նաեւ նախկին աշխատողների, ռադիոյի վետերանների զգալի մի մաս: Կարծում եմ, որ այդ կադրային բաղադրությունը ամենաճիշտն է: Եկող նոր օժտված սերնդին անդայման դիտի գումարվի նախորդների տարիների փորձը: Ուրախալի է տեսնել, ինչպես չնչին աշխատավարձով, սակայն անձնուրաց ավագները իրենց փորձն են հաղորդում երիտասարդներին, իսկ մարդկային առումով նաեւ կյանքի դայմանների բազում դժվարությունների դիմակայելու օրինակ ծառայում:

– Հայտնի է, որ ռադիոյի երաժշտական ձայնադարանը վատթար վիճակում է: Հատկապես վերջին տարիների անբարվոք դայմանները մեծ վնաս դիտի հասցրած լինեն կիսամութ, ծմակ նկուղում դահվող ազգային, համաշխարհային գանձերի համար:

– Այդդես է: Սակայն առանձնապես մեծ գումարներ չեն հարկավոր ձայնադարանը կարգի բերելու եւ դրա աշխատանքները արդեն սկսված են: Ուզում եմ ասել, որ հաստատակաց վերջին 7-8 տարում, ձայնադարանի շատ-շատ անգուգական նմուշներ իսդաստ ոչնչացումից են փրկվել հատկապես նրա աշխատողների անձնական ջանքերով:

– Այսօրվա դայմաններում ինչդե՞ս է լուծվելու ռադիոյի ձայնադարանի հարստացման հարցը: Չէ՞ որ Խորհրդային Միության օրոք այն հիմնականում համալրվում էր Մոսկվայից ուղարկվող նմուշներով...

– Անշուշտ, դա դյուրին խնդիր չէ, գուցե եւ ամենացավոտներից մեկը: Այդ, բոլոր դեպական մակարդակի կադրերը, առնչությունները փլուզվել են այդ օղակներով ոչինչ չի ներմուծվում մեր ձայնադարան: Ամենայն դեպս ստիպված ենք լուծելու այդ խնդիրը անձնական եղանակով գործի դնելով սեփական կադրերը:

– Ասել է, թե այս հարցում էլ էնտուզիազմ եք ցուցաբերում:

– Էնտուզիազմը ընդհանրապես մեր աշխատանքի հիմքն է եւ դա չոլիազանդություն չէ, այն մեր աշխատանքը՝ որ ռադիոյի աշխատողներ հոգով վարակում է աշխատանքի գայթակղությունը իրենց ծախսերը: Մասների վրա այսօր կարելի է հաշվել այն հիմնարկ հաստատությունները, որ այդդիսի նվիրյալների կարող ենք գտնել:

– Կարծում եմ, որ նույն «էներգիայով» են աշխատում նաեւ Հայաստանի Ազգային ռադիոյի հանրապետությունում եւ նրա սահմաններից դուրս ճանաչված կոլեկտիվները՝ սիմֆոնիկ, էստրադային-սիմֆոնիկ նվագախմբերը, Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների, հնագույն երաժշտության «Շարական» կամերային երգի, աղուղական երգի «Սայաթ Նովա», մանկական «Արեւիկ» համույթները, ջութակահարների անսամբլը...

– Ինչ խոսք... Այս կոլեկտիվների հրաշալի լուծմանը կարոս խնդիրները գրեթե զուտ ֆինանսական են: Նրանցից յուրաքանչյուրի ղեկին անվանի եւ հոյակաղ երաժիշտներ են կանգնած, վաստակաշատ ղեկավարներ ի դեմս մեծ մաեստրո Օհան Դուրյանի՝ ի դեդ, որի ծննդյան 75 ամյակը դատրաստվում ենք նշել, Գեւորգ Աճեմյանի, Ռուբեն Մաթեւոսյանի, Երվանդ Երզնկյանի, Դանիել Երաժշտի, Տիգրան Հեքեքյանի, Արմեն Դիվանյանի, Թովմաս Պողոսյանի...

Բոլորն էլ տոգորված են ստեղծագործական անհալիներով:

Ասեմ նաեւ, որ վերանորոգվում է հոդեմի դատճառով շարքից դուրս եկած թիվ 6 ստուդիան: Երաժիշտներին այն հանձնվելու է եվրոդական չափանիշներին համադատասխանող մակարդակով:

Սիա այսդիսին են Հայաստանի Ազգային ռադիոյի երաժշտական ծրագրերի տնօրենության առջեւ այսօր ծառացած խնդիրները, որոնց լուծման ազգանվեր գործին է հավատարմագրված իրեն շրջադատող կոլեկտիվի հետ տնօրեն Կարեն Շահինյանը:

Ռ. Հ.

ՇՈՒՇԱՀԱՆԴԵՍ

Իրանի դեկորատիվ-կիրառական արվեստը Հայաստանի ազգային դատկերասրահում

Արեւելքի ժողովուրդների դարավոր մշակույթի դատմության մեջ բացառիկ տեղ ունի իրանական արվեստը:

Հայաստանի ազգային դատկերասրահում մի շարք գեղանկարչական գործերից բացի՝ դահվում է իրանական դեկորատիվ-կիրառական արվեստի սքանչելի մի հավաքածու՝ գեղարվեստական անկվածներ, խեցեգործական, փայտյա, մետաղյա, ինչդես նաեւ դատյե-մաշե տեխնիկայով դատրաստված իրեր, որոնք դատկանում են «սեֆյան» եւ «հետսեֆյան» (XVI-XIX դդ.) ժամանակաշրջաններին: Խեցեգործական խոշոր կենտրոններ Ռեյ, Քաշան, Քերման, Յեզդ, Սուլթանաբաղ քաղաքներում արտադրվել են թե՛ ձեւի, թե՛ կիրառման տեսակետից խեցեղեն բազմազան առարկաներ: Արեւելյան ավանդական խեցեգործության մեջ շողյուն գունազարդումով, բազմագույն արծնադակիներով, կոբալտով, սեւագույնով, վերջնարակային կամ ներջնարակային եղանակներով գեղազարդված իրերը առանձնանում են ձեւերի արտահայտչականությամբ, զարդանկարային գեղեցկությամբ, կենսախնդությամբ եւ գլխավորը՝ հմայիչ դատկերայնությամբ: Պարսկական եւ ընդհանրապես արեւելյան խեցեղենի դեկորատիվ օձակրասա սեր դրսեւորվում է: Դարսկական մանրանկարչությունը սկզբնադբյուր է հանդիսացել զարդարվեստի մի յուրօրինակ տեսակի՝ լաֆադաս գեղանկարչության: Այն կիրառվում էր դատյե-մաշե տեխնիկայով ու փայտից դատրաստված կենցաղային առարկաների՝ զարդատուփերի, գրչատուփերի, հայելու, դատյանների, սկուտեղների, ծիու թամբերի դեկորատիվ ձեւավորման մեջ: Գեղանկարչական եղանակով մշակված բազմաֆիգուր հորինվածքներն արտացոլում են մանրանկարչական տարբեր դոյրոցներին բնորոշ սյուժեներ, որոնք նրբորեն ներդաշնակված են առարկաների կողմասերը ծածկող բուսական ու երկրաչափական մանրանախշ դատկերներին: Մետաղամշակումը Իրանում ունի հազարամյակների դատմություն: Մեծ համբավ է վայելել դարսկական գեղարվեստական բրոնզը, իսկ ավելի ուշ՝ դղինձը: Դեկորատիվ հիանալի ձեւավորմամբ են աչքի ընկնում մետաղյա կենցաղային իրերը՝ սափորներ, սկահակներ, բաստեր, սկուտեղներ, մոմակալներ, ծխամաններ ու խնկամաններ, որոնք շատ հաճախ ընդելուզված են արծաթով, սաղափով, զարդարված փորագրության տարբեր եղանակներով՝ բարձր ու ցածր ռելիեֆային, երբեմն ծակոտկեն, զարմանալի լուսաստվերային խաղ առաջացնող մակերեսներով: Վաղուց համաշխարհային լայն ճանաչում են ձեռք բերել դալատական արհեստանոցներում ստեղծված գորգագործության ու ջուլհակագործության նմուշները: Դիդակտ, բավական ատլաստ չունեցող գործվածքները առանձնանում են հորինվածքների բազմազանությամբ, նուրբ ու գունեղ կոլորիտով, գծային գեղեցկությամբ: Ոսկեփայլ մակերեսների վրա թիթեռների, թռչունների հարեւանությամբ մեխակի, շուշանի, նարգիզի դատկերումները բացահայտում են դարսիկ վարդեսների ծաղիկների հանդեդ ունեցած դաշտամունքը: Գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում նաեւ դարսկական մանրանկարչության ոգով ստեղծված (դիմադատկերային անվանվող) մետաղե բավական գործվածքները:

«Իրանը հայ նկարիչների աչքերով» նկարահանդեսից հետո Հայաստանի ազգային դատկերասրահում առաջին անգամ կազմակերդվող իրանական դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցահանդեսը երկու երկրների մշակութային զարգացող կադերի նոր դրսեւորում է:

Լ. ԴԱՎԹՅԱՆ
Դատկերասրահի կիրառական արվեստի բաժնի վարիչ

ՀՈԲԵԼՅԱՆ

Հանդիպում
ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉՅԱՆԻ
հետ

Lady «S. D. F.» («Լեդի առանց կայուն հասցեի») մոնոդրամի ընթերցում.

հեղինակ
Անահիտ Թոփչյան

Հանդիպումը տեղի կունենա
սեդտեմբերի 11-ին,
ժամը 14.00. Հայաստանի գրողների միության կլոր սրահում

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Երկու անգամ նույն գեսը չես մտնի

Կհետևե՞ն այս ասացվածքին հայ ֆուտբոլիստները

ՀՐԱՅՐ ՆԱՀԱԲԵԱՆ

Հանգստյան օրերին եվրոպական աշխարհամասում կայացան ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի եւս 12 հանդիպումներ: Հայտնի դարձան եզրափակիչ փուլի բաղձալի ուղեգրի 2 նոր երջանիկ տերեր՝ Նորվեգիայի եւ Հոլանդիայի թիմերը, իսկ մեկ խաղում իսկական անակնկալ գրանցվեց: Դրա հեղինակ դարձան ֆինները, որոնք 2-1 հաշվով հաղթեցին շվեյցարացիներին եւ ենթախմբում 2-րդ տեղը գրավելու լավ հնարավորություն ստացան: Միաժամանակ, գործնականում Ֆրանսիայի ուղեգրից զրկեցին իրենց մրցակիցներին:

Միայն մեկ անգամ է Գերմանիայի ընտրանին պարտվել ընտրական մրցաշարում՝ 12 տարի առաջ Պորտուգալիայի հավաքականից:

Այս անգամ էլ մեծ հետաքրքրություն էր առաջացրել 9-րդ ենթախմբում ընդգրկված նույն մրցակիցների մրցամարտը, որը կայացավ Բելֆինի օլիմպիական մարզադաշտում: Այն վճռական նշանակություն ուներ պորտուգալացիների համար, որոնց պայքարը շարունակելու համար հարկավոր էր ամեն գնով հաղթել: Հակառակ դեպքում խմբում նույնիսկ երկրորդ տեղը գրավելը հարավցի ֆուտբոլիստների համար մեծ բարդություններ հետ կաղված կլիներ: Այդ պատճառով պորտուգալացիները մեծ վերելքով անցկացրեցին հանդիպումը, դրա ողջ ընթացքում կառավարելով այն Դաշտի տերերին բազմիցս կարող էին դառնացնել Ռուի Կոշտան, Բարբոզան Գերմանացիներն էլ չէին խեղճանում՝ [illegible] պահերը չօգտագործեցին Տոմաս Հելմերը, Մարիո Բասլերը: Այդ երեկո մարզասերներն ականատես եղան իրոք հետաքրքիր եւ լարված պայքարի: Փաստորեն, 90 րոպեների ընթացքում գրոհները փոխնիփոխ հետեւում էին մեկ այս, մեկ այն դարպասին: 70-րդ րոպեին հյուրերը խաղի հաշիվը բացեցին: Այլի ընկավ Լիսաբոնի «Սպորտինգի» ֆուտբոլիստ Պիեդրո Բարբոզան: Շուտով պորտուգալացիները մնացին 10 հոգով՝ դաշտից հեռացվեց Ռուի Կոշտան, որը «կրիայի քայլերով» էր գնում փոխարինման: Իսկ 81-րդ րոպեին փոխարինման դուրս եկած Ուլֆ Կիրստենի հարվածը անկասելի էր՝ 1-1: Այսպիսով, գերմանացիները կրկին հաստատեցին այն միտքը, որ երկու անգամ նույն գեսը չես մտնի: Իսկ արդյունքը փաստորեն նվեր էր Ուկրաինայի հավաքականին: Քանի որ եթե այստեղ որոշվեր հաղթողը, ապա ուկրաինացիների գործերը կբարդանային:

Շվեդիայի հավաքականը, որ 1994 թ. ԱՄՆ-ում գրավեց 3-րդ տեղը, այս անգամ կարծես թե ընդհանրապես չի մասնակցի վճռական պայքարին: Սկանդինավցի ֆուտբոլիստները 0-1 հաշվով զիջեցին ավստրիացիներին եւ երրորդ տեղն են զբաղեցնում ենթախմբում: Հանդիպումը բավականին նյարդային ստացվեց՝ մրցավարը 3 կարմիր քարտ ցույց տվեց: Իսկ միակ գոլը 76-րդ րոպեին խփեց Անդրեաս Հերցոգը:

8-րդ ենթախմբում Ռումինիայի հավաքականը ծիծաղի առարկա դարձնելով Լիխտենշտեյնի թիմի պաշտպանությունը (8-1), մրցակիցների համար անհասանելի 1-ին տեղի բարձրությունից հետեւում է երկրորդ տեղի համար մղվող ահեղ պայքարին: Գլխավոր հավակնորդները Լիտվայի եւ Իսլանդիայի թիմերն են: Իսլանդացիներն արտագնա խաղում 4-2 հաշվով հաղթեցին իսլանդացիներին, իսկ լիտվացիները Վիլնյուսում՝ մակեդոնացիներին (2-0): Վերջիններս գնալով ավելի շաս են զիջում մրցակիցներին:

Պակաս հետաքրքիր չէր նախկին համաերկրացիների՝ Խորվաթիայի եւ Բոսնիա-Հերցեգովինայի հավաքականների հանդիպումը: Դեռ երկար կհիշի դարպասապահ Դրաժան Լագիշը խաղակզբում՝ 8-րդ րոպեին բաց թողած գոլը: Այն լիովին կարող էր ճակատագրական լինել Լագիշի համար, եթե խորվաթները պարտվեին նման կարեւոր խաղում: Իսկ հարձակվողները չէին պատրաստվում օգնել թիմին: Լավ է, որ հուսալի խաղացին պաշտպանները: Սլավան Բիլիչը վերականգնեց հավասարակշռությունը, իսկ Սիլվիո Մարիչը խորվաթներին առաջ մղեց դեռ ընդմիջումից առաջ: Երկրորդ խաղակեսում բոսնիացիները հասկացրին, որ չնայած Ֆրանսիա մեկնելու նվազագույն հնարավորություն ունենալուն, չեն պատրաստվում առանց պայքարի հրաժեշտ տալ երազանքին: Սակայն խաղավերջում (80-րդ րոպեին) Զվոնիմիր Բոբանը նրանցից խլեց աշխարհի առաջնությանը մասնակցելու գործնականում վերջին հույսը՝ 3-2:

Շվեյցարացիները եւս հավակնություններ ունեին 2-րդ տեղը գրավելու 3-րդ ենթախմբում: Դրա համար նրանք պետք է գոնե 1 միավոր վաստակեին ֆիններին հետ խաղում: Սակայն տարբերություն ֆինն տղաները դրության տերն էին 90 րոպեների ընթացքում: Իսկ Յարի Լիտմանենի գոլը թեեւ չսառեցրեց շվեյցարացիների կրքերը, բայց ստիպեց նրանց բացվել: Եվ երկրորդ խաղակեսում հաշիվը դարձավ 2-0: Միակը, ինչ հաջողվեց դաշտի տերերին, պատասխան փորձ-ինչ անհեթեթ գոլը խփելն էր:

7-րդ ենթախմբում հանդիպեցին առաջատարները՝ Հոլանդիայի եւ Բելգիայի հավաքականները: Նրանց առերես մրցամարտն ապացուցեց «նարնջագույնների» բացարձակ առավելությունը: Համենայն դեպս այդ օրը: Հոլանդացիները անհյուրընկալ գտնվեցին: Եվ 2-0 հաշիվը նրանց օգտին 2-րդ խաղակեսի միջնամասում լիովին օրինաչափ էր: Սակայն գոլ բաց չթողնելու ցանկությունը բերեց կանոնների խախտման տուգանային հրապարակում: Բելգիացի Լորենս Ստալենսի հարվածը 11 մ նշանակետից դասվում էր անկասելիների շարքը: Ամեն ինչ իր տեղը դրեց Դենիս Բերկամպը, որը 81-րդ րոպեին վերականգնեց 2 գնդակի տարբերությունը՝ 3-1 եւ հոլանդացիներն այժմ արդարացիորեն ստանձնել են ենթախմբի միանձնյա առաջատարությունը:

Կիրակի օրը վերջապես տեղի ունեցավ Շոտլանդիա-Բելառուս հանդիպումը: Այս խաղը պետք է կայանար մեկ օր առաջ: Սակայն բավարարելով բրիտանական հանրության բողոքները եւ խորհրդակցելով Մեծ Բրիտանիայի կառավարության հետ, Շոտլանդիայի ֆուտբոլի ասոցիացիան վերջապես հետաձգեց այն, քանի որ սեպտեմբերի 6-ը իշխանուհի Դիանայի հուղարկավորության օրն էր: Մինչ այդ, երկրի հավաքականի 3 ֆուտբոլիստներ հրաժարվել էին խաղադաշտ դուրս գալ, եթե խաղը կայանար շաբաթ օրը: Իսկ սեպտեմբերի 7-ին թիմը ներկայացավ սգո ժապավեններով: Դա սակայն չխանգարեց շոտլանդացիներին հաղթել 4-1 հաշվով:

Այսօր Հայաստանի հավաքականին հերթական լուրջ փորձությունն է սպասում, հանձինս Գերմանիայի ընտրանու: Հուսանք, որ մեր տղաները պատվով կհանձնեն այս քննությունը:

Պատմությունը չկրկնվեց. Գերմանացիները ցնծում են

Խումբ 1

Խորվաթիա-Բոսնիա՝ 3-2
Սլովենիա-Հունաստան՝ 0-3

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հունաստան	7	4	1	2	11-4	13
2. Դանիա	6	4	1	1	11-5	13
3. Խորվաթիա	6	3	3	0	13-8	12
4. Բոսնիա	7	2	0	5	8-14	6
5. Սլովենիա	6	0	1	5	4-16	1

Խումբ 3

Շվեյցարիա-Ֆինլանդիա՝ 1-2
Ադրբեջան-Նորվեգիա՝ 0-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Նորվեգիա	7	5	2	0	16-2	17
2. Ֆինլանդիա	7	3	1	3	10-11	10
3. Հունգարիա	6	2	2	2	6-6	8
4. Շվեյցարիա	6	2	1	3	6-7	7
5. Ադրբեջան	6	1	0	5	2-14	3

Խումբ 4

Ավստրիա-Վենդիա՝ 1-0
Շոտլանդիա-Բելառուս՝ 4-1
Լատվիա-Էստոնիա՝ 1-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շոտլանդիա	9	6	2	1	13-3	20
2. Ավստրիա	8	6	1	1	12-4	19
3. Շվեդիա	8	5	0	3	14-9	15
4. Լատվիա	8	3	1	4	10-11	10
5. Բելառուս	8	1	1	6	5-16	4
6. Էստոնիա	9	1	1	7	4-15	4

Խումբ 6

Ֆարերներ-Չեխիա՝ 0-2

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իսպանիա	8	6	2	0	21-4	20
2. Հարավսլավիա	8	6	1	1	23-6	19
3. Սլովակիա	7	5	0	2	16-8	15
4. Չեխիա	8	3	1	4	12-6	10
5. Ֆարերներ	9	2	0	7	9-28	6
6. Մալթա	8	0	0	8	2-31	0

Խումբ 7

Հոլանդիա-Բելգիա՝ 3-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հոլանդիա	7	6	0	1	26-4	18
2. Բելգիա	7	5	0	2	17-9	15
3. Թուրքիա	6	3	1	2	16-9	10
4. Ուելս	7	2	1	4	18-18	7
5. Ս. Մարինո	7	0	0	7	0-37	0

Խումբ 8

Իսլանդիա-Իսլանդիա՝ 2-4
Լիխտենշտեյն-Ռումինիա՝ 1-8
Լիտվա-Մակեդոնիա՝ 2-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ռումինիա	8	8	0	0	32-3	24
2. Իսլանդիա	8	4	2	2	19-6	14
3. Լիտվա	8	4	2	2	8-5	14
4. Մակեդոնիա	9	4	1	4	21-16	13
5. Իսլանդիա	8	1	3	4	7-12	6
6. Լիխտենշտեյն	9	0	0	9	3-48	0

Խումբ 9

Հայաստան-Ալբանիա՝ 3-0
Գերմանիա-Պորտուգալիա՝ 1-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուկրաինա	9	5	2	2	8-6	17
2. Գերմանիա	8	4	4	0	15-6	16
3. Պորտուգալիա	9	4	4	1	11-4	16
4. Հայաստան	8	1	5	2	8-11	8
5. Հս. Իռլանդիա	8	1	4	3	6-8	7
6. Ալբանիա	8	0	1	7	3-16	1

ԼԵՀԱՍՏԱՆ

Հայ ըմբիշներն արդեն մրցավայրում են

Սեպտեմբերի 8-ին Լեհաստանի Վրոցլավ քաղաք մեկնեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականը մասնակցելու աշխարհի առաջնությանը: Թիմի ավագ մարզիչ Հարություն Խաչատրյանը եւ մարզիչ Արամ Գասպարյանը մրցավայր են ուղեկցել Վահան Ջուհարյանին (54 կգ. Գյումրի), Վաղինակ Գալուստյանին (69 կգ. Երեւան), Լեւոն Գեղամյանին (85 կգ. Ախուրյան), Խորեն Պապոյանին (97 կգ. Գյումրի) եւ Հայկազ Գալստյանին (130 կգ. Էջմիածին): Բացի նրանցից, թիմի կազմում հայտագրված են նաեւ ներկայումս արտերկրում գտնվող օլիմպիական չեմպիոն Արմեն Նազարյանը (58 կգ. Մասիս) եւ Մխիթար Մանուկյանը (63 կգ. Գյումրի): Այս մասին տեղեկացրին սպորտվարչության լրատվական ծառայությունից: Երեկ մարզիկների կբռվելու օրն էր:

2004 եւ ոչ թե 2008 թվի օլիմպիադան Աթենքում եւ ոչ թե Հռոմում

Շաբաթ օրվա «Ազգի» համարում կողմից վրիպում էր տեղի ունեցել: Նշել էինք, որ 2008 թ. օլիմպիական խաղերը կայանալու են Հռոմում: Վերնագրում թույլ տրված տարբերվի սխալը (2004-ի փոխարեն 2008 թ.) մեր մեխանիկական սխալն է: Լուրը բավականին ուշ էր ստացվել, այդ պատճառով էլ բացթողումն աննկատ էր մնացել: Սրա համար խնդրում ենք ներող լինել: Ինչ մնում է օլիմպիադա-2004-ի մայրաքաղաքին, աղա թյուրիմացության պատճառը «Ռոյթեր» գործակալությունն է, որի ուղարկած լուսանկարում եւ տեղեկությունում նշվում էր, թե իտալացիները ցնծում են, քանզի 5 թեկնածուների պայքարում հաղթել է հավերժական քաղաք Հռոմը:

Ինչպես Լոզանից արդեն Աթենք է վերադարձել հեղինակավոր պատվիրակությունը, որն ուրախ լուր է բերել քաղաքն իրավունք է ստացել ընդունելու 2004 թ. ամառային օլիմպիադան: Աղագա խոշորագույն մարզական փառատոնի մայրաքաղաքի բնակիչներն այս իրադարձությունը նշեցին մեծ համերգով եւ տոնական հրավառությամբ: Շնորհավորում ենք հույներին եւ կրկին հավաստում, որ ամենուին էլ չար միտում չենք ունեցել իրենց մայրաքաղաքի նկատմամբ:

Ռաֆթերը զարմացած է իր հաղթանակից



Շվեյցարուհի Մարտինա Հինգիսը դարձավ թենիսի ԱՄՆ բաց առաջնության հաղթող: Հիշեցնենք, որ մրցաշարը վերջինն էր «Մեծ սաղավարտի» շարքից: Առաջնությունը կազմակերպիչների համար անսպասելի էլ եկավ ունեցավ: Երբ հաշվի առնենք, որ տղամարդկանց մենախաղերի եզրափակիչում ամերիկացիներ չէին ներկայացել: Սակայն ամեն ինչի մասին հերթականությամբ: Հինգիսի համար «Ֆլեշինգ Միդոուի» կորտերը հաջողակ եղան: Աշխարհի թիվ 1 ռակետը մրցաշարային ցանցն անցավ գրեթե միավոր չբաժանելով: Էլ չենք խոսում սեթերի մասին: Եզրափակիչում նրան դիմակայում էր սեւամորթ ամերիկուհի Վենուս Ուիլյամսը: Յուրօրինակ սանրվածքով այս աղջիկը ֆիզիկական փայլուն տվյալներ ունի արագություն, դիմացկունություն, կոահողականություն: Դա բավական էր եզրափակիչ դուրս գալու համար, սակայն Հինգիսին դիմակայելու: Արդյունքում պարտություն 0-6, 4-6:

Տղամարդկանց մենախաղերի վճռական մրցամարտում հանդիպեցին ավստրալիացի Պատրիկ Ռաֆթերը եւ անգլիացի Գրեգ Ռուսեդսկին: Բոլորի համար սա անակնկալ էր, քանզի սպասվում էր Սամփրաս-Չանգ զույգի պայքարը: Արդեն երկրորդ տարին է, աշխարհի թիվ 1 եւ 2 ռակետները չեն կարողանում հանդիպել ԱՄՆ բաց առաջնությունում: Ռաֆթերի համար մրցաշրջան-97-ը լավագույնն է մարզական կենսագրությունում: Ավստրալիացին աչքի է ընկնում հզոր, սուր խաղով, ցանցի մոտ հիանալի պայքարելու ունակությամբ: Այս խաղում էլ նա ավելի արժանիորեն էր դիտվում մրցակցից եւ 2.5 ժամ տեւած պայքարից հետո հաղթեց 6-3, 6-2, 4-6, 7-5 հաշվով: Նրա խաղը հիացմունք է պատճառում մարզասերներին: Հենց դրա շնորհիվ շաբաթվա առաջին օրը Ռաֆթերը զարթնեց հանրահայտ դարձած: Նա մրցաշրջանը սկսեց լինելով 63-րդը համաշխարհային ասպիճանակարգում, իսկ այսօր զբաղեցնում է 3-րդ դիրքը փոխարինելով Եվգենի Կաֆելնիկովին: Առայժմ Ռաֆթերը մինչեւ վերջ չի գիտակցում կատարվածը: Ինչպես բերեց եւ նրա ծնողները: Թեեւ մայրն արդեն հայտարարել է, թե ո՞ւզում է տեսնել որդուն աշխարհի թիվ 1 ռակետի դերում:

Ռուսները չփայլեցին վարպետությամբ

Հոլանդիայում ընթանում է վոլեյբոլի Եվրոպայի տղամարդկանց առաջնությունը: Ա ենթախմբում հանդես եկող Ռուսաստանի հավաքականը մեկնարկային խաղում 3-0 հաշվով հաղթեց հարավսլավացի վոլեյբոլիստներին: Նույն խմբում իտալացիներն ոլորտության մասնակցին հույներին, իսկ սլովակները գերմանացիներին: Խմբային մրցաշարի երկրորդ խաղում ռուսները 2-3 հաշվով պարտություն կրեցին Սլովակիայի հավաքականից: Հաջորդ մրցամարտը եւս անհայտ էր ռուսական թիմի համար, որը զիջեց գերմանացիներին (2-3) եւ գործնականում զրկվեց պարգեւների համար պայքարին միջամտելուց:

ԱԶԳ

Օրվա հետքով

ԲԱՔՈՒ

Ստորագրվել է թուրք-ադրբեջանական համագործակցության պայմանագիր

ԲԱՔՈՒ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԹՈՒՐԱՆ. Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը եւ Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմը սեպտեմբերի 8-ին ստորագրել են ադրբեջանա-թուրքական համատեղ հայտարարություն եւ պայմանագիր «Թուրքիայի եւ Ադրբեջանի արտգործնախարարությունների համագործակցության եւ բարեկամական կոնսուլտացիաների մասին»: Դրանից հետո նրանք փոխանակել են վավերացնող փաստաթղթեր, որոնք ուժի մեջ կմտցնեն 1994 թվականի հունվարի 9-ին ստորագրված «Ներդրումների խթանման եւ պաշտպանության մասին» եւ «Համագործակցության եւ փոխօգնության մասին» պայմանագրերը: Փաստաթղթերն ստորագրվել են երկու երկրների արտգործնախարարությունների ղեկավարների կողմից:

Թուրքիայի եւ Ադրբեջանի հարաբերությունների առնչությամբ Ալիեւն ասել է, որ դրանք իրենց բնույթով ռազմավարական են: Նա ավելացրել է, որ տնտեսական կապերը էլ ավելի պետք է սերտանան, եւ որ Ադրբեջանը ծրագրում է ստանալ թուրքմենական գազ, որն այնուհետեւ Թուրքիայի տարածքով կարող է փոխադրվել Եվրոպա: Նախագահը հավաստել է իր այն որոշումը, որ ազգմավարական նշանակություն ունեցող նավթամուղը պետք է անցնի Թուրքիայի տարածքով եւ հասնի Ջեյհան նավահանգիստ:

Հեյդար Ալիեւը Թուրքիային կոչ է արել աշխուժացնել գործունեությունը Լեռնային Ղարաբաղի խնդրով զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Ընդունելով Թուրքիայի արտգործնախարարության ղեկավար Իսմայիլ Ջեմին եւ պետնախարար Ահմադ Անդիջանին Ադրբեջանի նախագահը նշել է, որ Անկարան կարող էր ավելի ծանրակշիռ դեր խաղալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրում, որը, նրա խոսքերով, պետք է կարգավորվի Լիսաբոնի հանձնաժողովի հայտ սկզբունքների եւ այդ հաշտարար խմբի համանախագահների Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի առաջարկած նոր նախաձեռնությունների հիման վրա:

Ինչպես հայտարարել է Ալիեւը, միջազգային միջնորդների նոր նախաձեռնություններում Ադրբեջանին բնավ էլ ամեն ինչ չէ, որ ձեռնտու է, բայց դրանցում կան դրույթներ, որոնց հիման վրա կարելի էր զարգացնել բանակցությունների գործընթացը:

Ինչպես հաղորդել է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ը, Հեյդար Ալիեւը թուրք նախարարների ուշադրությունը հրավիրել է «1993-97 թվականներին Հայաստանին մեկ միլիարդ դոլարի ռուսական սպառազինությունների անօրինական մատակարարումների վրա»: Հեյդար Ալիեւի խոսքերով, «թեպետեւ որոշում է ընդունված նմանօրինակ փաստերի քննման համար ստեղծել եռակողմ ռուս-ադրբեջանա-հայկական հանձնաժողով, այդ աշխատանքը դեմ է առնում շատ խոչընդոտների»: «Մեզ հարկավոր է գործել համատեղ, որպեսզի այդ զենքը դուրս բերվի տարածաշրջանից», նշել է Ալիեւը: Ադրբեջանի ղեկավարը խիստ մտահոգություն է հայտնել օգոստոսի 29-ին Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրված պայմանագրի առթիվ, նշելով, թե «այդ փաստաթուղթը կարող է դայրյունավտանգ կացություն ստեղծել տարածաշրջանում»:

«Զյուդդոյչե ցայտունգ». Անկարան շատ է ուշացել Երեւանին գայթակղելու համար

9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Գերմանական «Զյուդդոյչե ցայտունգ» թերթը «Անկարան շատ է ուշացել Երեւանին գայթակղելու համար» վերնագրով մի հոդված է հրապարակել, որում օրաթերթի թղթակիցը Սամբուլից գրում է, «Կովկասում Անկարայի ամենամոտ գործընկեր Ադրբեջանը միշտ էլ բողոքել է միայն թե շատ Հայաստանի հետ մերձենալու Թուրքիայի ամեն մի քայլի դեմ: Այդ պատճառով Թուրքիան հետզհետե մոտենում է այն եզրահանգմանը, թե Ադրբեջանի հանդեպ իր անդրդվելի հավատարմությունը կարող է բացասական կողմ էլ ունենալ»: Բաքվի ընդդիմադիր կեցվածքը բազմիցս խոչընդոտել է հայ-թուրքական սահմանի վերաբացմանը: Ըստ թղթակցի, սահմանի վերաբացումն ու հարաբերությունների կարգավորումն Անկարային անհրաժեշտ է Հայաստանի տարածքով դեպի Արեւմուտք Ռուսաստանի գազի տեղափոխման եւ տարածաշրջանում իր ազդեցությունն ընդարձակել կամեցող Ռուսաստանին կանգնեցնելու համար: «Սակայն բավական ուշ է հիմա, գրում է թղթակիցը, մինչ թուրքերը կկտրեն իրենց թեւերը, ռուսները արդեն վերստին ամրացնում են իրենց ավանդական հզոր դիրքերը»: Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահների վերջերս ստորագրած պայմանագիրը, ըստ թերթի, Հայաստանին դարձրել է Ռուսաստանի ամենամերձավոր գործընկերը: «Հայաստանը հզոր բարեկամների կարիք ունի, քանի որ լավագույն հարաբերությունների մեջ չէ իր անմիջական հարեւաններից եւ ոչ մեկի հետ», գրում է թերթը: «Իսկ Թուրքիայի հետ, մասնավորապես, հարաբերությունները շատ լարված են: Դարասկզբին թուրքերի կողմից հայերի կոտորածը, Անկարայի աջակցությունն Ադրբեջանին, Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունների կարգավորումն այժմ արդեն անհնար են դարձել», գրում է «Զյուդդոյչե ցայտունգը» եւ ավելացնում, «Եթե զինված բախումները վերսկսվեն, Մոսկվան ըստ պայմանագրի կարող է աջակցել Հայաստանին: Ռուսաստանն արդեն իսկ զգալի հենակետեր ունի Հայաստանում: Վերջին տարիներին Հայաստանի զինված ուժերը համալրվել են Ռուսաստանում արտադրված զգալի տեխնիկայով, եւ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան իրեն ուղղակիորեն սպառնալիքի տակ է համարում», գրում է թերթը: Թերթի թղթակիցը չի բացառում Բաքվի եւ Երեւանի միջեւ զինված բախման հետագա նոր փուլ: Այս դեպքում Ադրբեջանն իր նավթային դոլարները զինված ուժերին ուղղելու եւ իր կորուսյալ տարածքները վերագրավելու գայթակղություն կարող է ունենալ: «Հայերն, իրենց հերթին, ինքնավստահ են զգում Ռուսաստանի աջակցությամբ», հավաստում է գերմանական օրաթերթը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ը ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՈՐ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը կրկին դիմումներ է ընդունում մագիստրոսի աստիճան շնորհող համեմատական եւ միջազգային առեւտրային իրավունքի երկամյա ծրագրի համար: Լիցենզավորված ոչ պետական բուհերի շրջանավարտները կարող են դիմել պայմանականորեն, պայմանները ձեռք բերելու համար խնդրվում է դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:

Ծրագիրը համեմատական սկզբունքով կուսումնասիրի եվրոպական քաղաքացիական իրավունքի եւ անգլո-ամերիկյան իրավունքի համակարգերի իրավական ավանդույթները եւ կունենա երկու ուղղվածություն: Համեմատական սահմանադրական իրավունքի առարկաները կընդգրկեն սահմանադրականության իրավական կանոնակարգման, օրենսդրական նախագծման, հասարակության եւ անհատի իրավունքների հիմնահարցերը, ինչպես նաեւ միջազգային համաձայնագրերին եւ պայմանագրերին վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը: Միջազգային գործարարության իրավունքի շրջանակներում կուսումնասիրվեն շուկայական տնտեսության, միջազգային հանային իրավունքի եւ միջազգային գործարքների հիմնական դրույթները, պայմանագրային հարաբերությունները, միջազգային առեւտուրը, միջազգային ֆինանսական իրավունքը եւ վեճերի լուծման մեթոդները: Համեմատական եւ միջազգային առեւտրային իրավունք ծրագրի հիմնական նպատակն է հնարավորություն տալ ուսանողներին օժանդակելու իրենց երկրի ա) քաղաքականության մշակման եւ օրենսդրական գործընթացների եւ բ) զարգացող շուկայական տնտեսության իրավական հիմքերի ստեղծմանը:

Դիմորդները պետք է ունենան իրավաբանական բարձրագույն կրթություն եւ անգլերեն լեզվի մասնակի իմացություն: Դիմորդները պետք է ներկայացնեն դիպլոմ եւ ներդիր իրենց պատճեններով, երեք երաշխավորագիր-նամակ, լրացնեն դիմում եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման կանխավճարը կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք դրամ, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: 1997 թ. սեպտեմբերի 15-ը փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է:

Բոլոր դիմորդները 1997 թ. սեպտեմբերի 17-ին կհանձնեն անգլերեն լեզվի իմացությունը գնահատող քննություն (բացառությամբ այն դիմորդների, ովքեր վերջերս TOEFL քննությունից ստացել են 550 եւ ավելի միավոր): Առաջին փուլով անցած այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության պահանջված մակարդակը, կմասնակցեն 1997 թ. հոկտեմբերից մինչեւ 1998 թ. ապրիլի վերջը ՀԱՀ-ում անցկացվող անգլերեն լեզվի արագացված ծրագրին: Անգլերեն լեզվի արագացված ծրագրի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 300 դոլարին համարժեք դրամ: Նախնական ծրագիր ընդունվելը 1997 թ. սեպտեմբերին, դիմորդների հետ հարցազրույցներ կանցկացվեն:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի եւ նախապատասխանական փուլում ցուցաբերած առաջադիմության հիման վրա: Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները պետք է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո 3 տարի Հայաստանում մնալու եւ աշխատելու մասին պայմանագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի Ընդունելության գրասենյակ: Հասցեն Սարեալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ:
Հեռախոս 27-16-29

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրականություն չի ճանաչում

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

Առանձնատուն 80 քառ. մ նկուղ ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

սեփական երկհարկանի շենքի 2-րդ հարկը բաղկացած երեք սենյակից: Երկու կողմից սեփական հողատարածք 300 քառ մետր ընդհանուր մակերեսով: Երկու ավտոտնակ, մուտքը առանձին: Հասցեն Զրաշատ 68 (ՊԱ հեռեւի մասում):

Հեռախոս 52-54-39:

ՀԱՍԱՐՈՍ

Մեսութ Յըլմազը եռօրյա այցով մեկնեց Ղազախստան

9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՌՖԻ: Անկարայից հաղորդում են, որ Թուրքիայի վարչապետ Մեսութ Յըլմազը եռօրյա այցով մեկնեց Ղազախստան: Ծրագրված են հանդիպումներ ղեկավարների հետ, երկու երկրների միջեւ համագործակցության ընդլայնում եւ երկկողմ համագործակցության մասին մի շարք համաձայնագրերի կնքում:

Իսրայելում կօրինականացվի կաթոլիկ եկեղեցու կարգավիճակը

9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՌՖԻ: Ֆրանսպրես գործակալության երուսաղեմից հղած հաղորդագրության համաձայն Իսրայելի իշխանությունները հաստատեցին Վատիկանի հետ համաձայնագիրը, ըստ որի օրինականացվեց կաթոլիկ եկեղեցու եւ նրա ինստիտուտների կարգավիճակը Սուրբ տեղյաց վրա: Այդ համաձայնագիրը բխում է «Հանդիսավոր համաձայնագրից», որով 1993 թ. դեկտեմբերին կողմերը ճանաչեցին իրար: Պայմանագիրն այժմ պետք է ստորագրեն Իսրայելի արտգործնախարարը եւ Հռոմի պապական նվիրակը, որից հետո պետք է վավերացնի Իսրայելի խորհրդարանը՝ Քնեսեթը:

Բոսնիայի 2 կուսակցությունները կբոյկոտեն ընտրությունները

9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Բոսնիայի «Խորվաթական ժողովրդական կուսակցությունը» եւ «Սերբական ժողովրդավարական կուսակցությունը» հայտարարեցին, որ բոյկոտելու են շաբաթվա վերջին կայանալիք ընտրությունները: Այս հայտարարությունը ստացվել է Պալեից: «Սերբական ժողովրդավարական կուսակցության» բարձրաստիճան ներկայացուցիչ Ալեսկա Բուհան ասաց, որ քվեարկությունը չի կարող տեղի ունենալ, քանի որ Դեյթոնի համաձայնագիրը լրիվ ճգնաժամի է հասել:

Թալիբները գրավել են Մազարի Շարիֆի օդանավակայանը

ԱԲՈՒ ԴԱԲԻ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Թալիբան» աֆղանական շարժման զինված ջոկատները տիրել են Մազարի Շարիֆ քաղաքից 8 կիլոմետր հեռավորության վրա գտնվող օդանավակայանը, որը երկրի հյուսիսում հակաթալիբյան դաշինքի կենտրոնն է: Բուն քաղաքում, որտեղ տեղավորված է գեներալ Աբդուլ Մալեքի կենտրոնակայանը, կատաղի մարտեր են մղվում: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այսօրվա հաջող հարձակմանը նախորդել է երկուշաբթի օրը թալիբների կողմից Մազարի Շարիֆից 50 կիլոմետր արեւելք գտնվող Տաշկուրգան քաղաքի գրավումը, ինչը թույլ տվեց փաստորեն կտրել քաղաք տանող բոլոր ճանապարհները եւ դրանով իսկ Աբդուլ Մալեքի գորքը բողնել առանց համալր-

Շտապ պահանջվում է

3 լուրջ մարդ՝ պայմանագրով աշխատելու համար:

Հեռ. 27-10-21:
Զանգահարել ժ. 19–22-ը:

Շտապ գնում եմ

2 սենյականոց բնակարան քաղաքի ծայրամասերում:
Զանգահարել 224268, 230402

Կխնամեմ

Երեխա, 10 ամսականից բարձր հասակի:
Զանգահարել 248856, 553701:

Ուզո՞ւմ եք ստանալ նույնքիսի արդյունք: Զանգահարեք այժմ, եւ արդեն վաղը դուք կկորցնեք առաջին կիլոգրամներն ու սանտիմետրերը:
Հեռ.՝ 58-40-61
Զանգահարել ժամը 9-12-ը եւ 20-22-ը

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասին (առաջարկ, պահանջարկ) հեռախոսով: 589167, 581351:

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 660. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 9.09.1997. Գինը 100 դրամ